

3130

491.99-5
S-45

2010

491.99-5 N 511

S-45

503

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՔԱՂՄԱԿԱԿԱՆ ԽՈՎԱԿԱԿԱՆ

S U R E P E L

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ

Ա. Հ Ա Ս Ա Ս Ի Բ Ե Յ



ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ



ԹԻՖԼԻՍ

ՅՈՎԱՆՆԻԿՈ ՄԱՐՏԻՐՈՍԻԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԵԼԵԵՆ ՓՈՂՈՑ, 5

1883

37052-ահ

ՄԻ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ըստին քառեմս, մի վեցորդ հայու շնոր հայու ամս
ուղանու ու պատահաբաններ և ըստու մայման ամս
ի մաս աղմանական ծառու ու ամս և մատելու
ամս հայու է ու ամս և ամս և ամս և ամս ու ամս
ու ամս և ամս և ամս և ամս և ամս և ամս
Ընթերցողը կը նկատէ, որ քերականութեան
աոյն տետրակը սերտ կապ ունի նախընթաց տետրակի
հետ, որ սա նորա պարզ շարունակութիւնն է: Առաջին
գրքուկը հրատարակելիս՝ մենք ասացինք, որ նորան
նշանակում ենք որպէս երկրորդ տարուայ ուսուցման
նիւթ, թէե նորա վերջին մասը, բայտի հաղուցուեկան, հա-
վանական էինք համարում թողնել երրորդ տարուան:
Բայց ինչպէս երկում է, մեր ուսուցիչներն ու զեկա-
վագները գժուար են համարում լեզուի այբուբենից ան-
անջատ այդ վարժութիւնները, որոնց դիրութիւնն ու
օգտակարութիւնն մենք քանից ստուգած ենք, սկսել
երկրորդ տարուց: Եւ ոչ այդքամի միայն, այլ նոյն իսկ
քերականական ուսումը մեր ուսումնարաններում չե-
լվայելում իւր արժանաւոր տեղը. մեր ուսուցիչներից և
տեսուչ—տեսչուհիներից շատերը այն կարծիքին են, որ
քերականութեան ուսումը մի աւելորդ բեռն է ուսում-
նարանի համար, որը կարելի է շատ հեշտութեամբ
վերացնել, պատուիրելով լեզուի ուսուցչին ընթերցա-
նութեան հետ աւանդել և լեզուի քերականական ան-
հրաժեշտ գիտելիքները: Բայց նաև պէտք է խոստովա-
նուինք, որ մեզանում պակաս չեն ուսուցիչներ, որոնք
երանք անտեղեալ են չողութեան անհրաժեշտ
գիտելիքներն: Երկրորդ՝ մինչև անգամ նոցանից շատերը,
որոնք ասենք թէ հէնց գիտեն էլ լեզուն, չեն
կարող մշակուած և յարմարաւորած ուղղեցոյց ունենալ
երանց համար. եթէ դա հնարաւոր լինէր, ապա բայ-

Дозволено цензурою. Тифлисъ, 29 Июля 1883 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 5.



2002

9пЧ36-60

8/89-56

Գերս ասած բանը պիտի գոյութիւն չ'ունենար աշխարհիս երեսին. երբորդ և ամենագլխաւորը, որ զանցառութեան են տալիս մեր պարոն զեկավարները, այն է՝ որ նոքա կարծում են, թէ ինչ որ հեշտ է ուսուցչի համար, հեշտ պիտի լինի և աշակերտների համար. Ոչ ապաքէն մանուկը սեպհականում և իւրացնում է մի որ և իցէ հմտութիւն բազմաթիւ և գործնական վարժութիւնների շնորհիւ. ոչ ապաքէն կրկնութիւնը գիտութեան մալրն է, հետևապէս և վարժապետի աւանդածքերականական կանոնները ոչնչ արգիւնք չեն կարող ունենալ, եթէ աշակերտը միջոց չունենայ դասի ժամանակ իրան աւանդածը իւր սեպհական ուժերով կրկնել, երեքնել, վարժուիլ և արմատացնել իւր լիշողութեան մէջ: Մենք պնդում ենք մինչև անգամ, որ եթէ մեր մինչև իսկ միջնակարգ ուսումնարաններից գուրս եկած աշակերտները չ'են ուղիղ գրել չեն կարողանում, սորա պատճառը և հզօրագոյն պատճառն այն է, որ մեր գրական լեզուի ուսուցումը արհամարուած և բարձի թողի է արած: Մինչդեռ մեր լեզուն շատ և շատ կարօտէ խնամածութեան. շատ և շատ կարենու է, որ մեր ուսումնարանները ուսուցման գլխաւոր առաջիկան սարդարներն, սորան մշակէին, սորա հիմունքները, ոգին, քերականական և տրամաբանական կազմակերպութիւնը անձանօթ չ'թողէին իրանց աշակերտներին, այն աշակերտներին, որոնք վաղը պիտի դուրս գան այդ ուսումնարաններից և իրանց գրուածներով աւելի ևս պիտի նպաստեն լեզուի աղջատմանը:

Եւ ո՞լ չի նկատել, որ մեր աշխարհաբար լեզուն՝ կանոնաւոր կազմակերպութեան վերաբերութեամբ կամ բոլորովին չի յառաջադիմում, և կամ, որ աւելի ցաւալին է, օրէցօք աւելի խառնափնթորվում, աղաւաղվում է: «Հայերէն է, կարելի է ամեն տեսակ՝

գտել.» այս գաղափարն այնչափ ընդհանրացած է մեր մէջ, որ մեզանից ամէն մինը տգիտութիւնից, անուշագրութիւննից թէ ընդհանուր հոսանագլւն ենթարկուած լինելուց, առանց լազմահարուելու մեզանչում է լեզուի ոգու, նորա քերականական և տրամաբանական կազմութեան հիմնական կանոնների գէմ:

Մէ օրինակով հաստատենք ասսածներս՝ թէ և օրինակն իսկ աւելորդ էր, որովհետեւ ամենայն ոք, որ դիտելու ձիրք ունի, կարող է վեր առնել ինչ գերք և կամքենայ և ամենայն քայլափոխում մեր խօսքերին հաստատութիւն գտնել: Յայտնի է, օրինակ, որ աշխարհաբար լեզուն որոշեալ բառերի հոլովան մասին մի հիմնական կանոն ունի, այն է, որ մարդկանց յատուկ և հասարակ անունները, եթէ որոշող ոգ ունին, հայցական հոլովում փոխանակ ուղղականին, նման լինելու, նմանվում են տրականին. փոխանակ ասելու «Ես տեսաւ իմ հայրը», ասում ենք՝ «Ես տեսաւ իմ հայրը»: Այս կանոնը, կրկնում ենք, միմիայն մարդկանց անուններին է յատուկ. բայց ահա այսօր, լեզուի կազմակերպութեանն անձանօթ գրողների շնորհիւ, բոլոր շնչաւոր առարկաները ենթարկուած եքն տեսնում այս կանոնին, այսինքն փոխանակ ասելու «կովը մորթեցին» սկսել ենք ասել՝ «կովին մորթեցին»:

Եհուոյ, խառնաշփոթիւնը վերջին ծալրին հասցնելու համար, մենք այժմ սկսել ենք և անշունչ առարկաներ շատ անգամ այդպէս հոլովել:—Մենք բազմաթիւ օրինակներից միայն այս մինը վերցրինք, ցոյց տալու համար, որ լեզուի ուսումը օքէցօք աղջատմում է լրագրական թեթև և անմշակ յօդուածների ազդեցութեան տակ և մեր ուսումնարաններն են սրաբաւոր օր առաջ այս աղջատման արգելք դնել, աշխարհիկ

լեզուի քերականական ուսումն պատշաճապէս աւանդե.
լով իրանց սանիկներին:

Քերականութեան այս մասը նախընթացի անանջատ շարունակութիւնը լինելով, հաւանականապէս երսորդ և չորրորդ տարուայ ուսուցման նիւթը պիտի ամփոփէ իւր մէջ, բայց մենք այս անգամ հրաժարվում ենք սահման որոշել տրան, ուսումնաբանների զեկավարներին և բանիբուն ուսուցիչներին թողնելով ինքնին որոշել թէ երբ և ինչ ծառալով պէտք է սկսել քերականական ուսումը իրանց սանիկների հետ:

«Մայրենի լեզուի քերականութեան Տարերքը» շատ բաներով տարբերվում է իւր նախընթացներեց. սա, իսկապէս, կարօտ է մի մանրամասն բացատրական ձեռնարկի, մի բանալիե, բայց որովհետեւ գրքի յառաջաբանը չի կարող այդ նպատակին ծառայել, ուստի ես պարտք եմ համարում մի կէտի մասին գոնէ հարեանցի յիշողութիւն անել՝ մնացածը թողնելով ուրեշ տեղի ու ժամանակի: Ի՞մ ասելիքը պէտք է լինի տրական և հայցական հոլովների մասին: — Յայտնի է, որ մեր աշխարհաբար լեզուն չունի գրաբարի նախդրաւոր հոլովները. նոցա տեղը բռնել է վերջահոլով տրականը և հայցականը. Վերջահոլով տրականի մասին տարակուսանք չի կարող լինել տակաւին. բայց երբ մենք ասում եմ, թէ հին նախդրեւ տրականի պաշտօնը այժմ կատարում է հայցականը, սպասում ենք, որ շատերը պիտի հակառակին մեր ասածին, որովհետեւ շատերը գեռ այսօր էլ կարծում են, թէ «Ես Դաշտ գնացի» նախաղասութեան մէջ Դաշտ բառը տրական հոլով է, որովհետեւ ծագում է է Դաշտ բառից. իսկ է Դաշտ նախդրեւ տրական հոլով է գրաբար քերականութեան մէջ: Մինչև անգամ հայր Այտնեանը իւր վաստակաւոր և թանկագին աշխատութեան՝ Քննա-

կան քերականութեան վեսչէրում «Դաշտ գնացի» վերլուծում է այսպէս՝ Դաշտ գոյական անուն հասկ. եղակի դրահան անանիտիք անորոշ հոլով: Արդ՝ երբ որ մենք ասում ենք անանիտիք տրական, պէտք է ենթադրենք, որ կայ և նախդրաւոր տրական: Բայց որովհետեւ աշխարհաբար լեզուն նախդրաւոր տրական չունի, ուրեմն և մեր վերցրած բառը չի կարող աննախդրե տրական լինի: Սա պարզ է: Խրիստոս՝ նոյն ինքն հ. Այտնեան մի թերթից յետոյ նոյն նախաղասութիւնը գրաբար առնելով, լուծում է այսպէս՝ «Գնաց ՚ի Դաշտ» է նախդրե, Դաշտ՝ գոյական անուն հասարակ, եղակի հայցան: Հոլով: Ուրեմն է նախդրեը զատելով՝ մենք նախդրեւ տրականից, նոյն իսկ գիտնական հոր կարծիքով, ստանում ենք հայցան: Հոլով հայցական հոլովների նախդրեը՝ տալիս է մեզ հայցական հոլովը, փոխանակ տրականի: Բացի որանից մենք կարող էինք բազմաթիւ օրինակներ յառաջ բերել, ասկացուցանելու համար, թէ գրաբար լեզուի մէջ ևս նախդրեւ տրականի պաշտօնը շատ ու շատ անգամ կատարել է հայցական հոլովը, մասնաւոր չէզոքական բայերի մօտ:



Այն նախադասութիւնը, որի մէջ բացի գլխա-
ւոր անդամներից կան և պարզաբանող բառեր, կոչ-
վում է շնորհական առաջարկութեան:

105. Գտէք համառօտ և ընդարձակ նախադասու-
թիւնները:—Թուչունը թուչում է: Երգող թուչունները ձմե-
ռը հեռանում են օտար երկիրներ: Գիւղացին աշխա-
տում է: Գիւղացին գարնանը արօրով վարում է հողը:
Արտերը կանաչում են: Հնձողները արտերը հնձում են
սուր մանգաղներով:

Ծառերը ծաղկում են: Խոտը կանաչում է: Զիւնը
սպիտակ է: Սոխակը թուչուն է: Սոխակը տարագնաց
թուչուն է: Հաւը ընտանի թուչուն է: Գարնանը ձիւնե
տակից գլուխը հանում է սիրունիկ ձնծաղիկը: Կապու-
տակն մանուշակը գարնան կարապետն է:

106. Հետևեալ նախադասութիւններն ընդարձա-
կեցիք:—Կովը բառաչում է: Շունը հաչում է: Զին ու-
տում է: Խոտը բուսնում է: Աշակերտը գրում է: Արելը
լուսաւորում է: Վարժապետը ուսուցանում է: Մայրս
կարում է: Երկրագործը հերկում է: Պարտիզանը տըն-
կում է: Հացթուխը թխում է: Դերձակը կարում է:

107. Հետևեալ նախադասութիւնները համառօտե-
ցիք:—Մէկ փոքրեկ երեսայ կար: Ծնողքը ուղարկեցին նո-
րան ուսումնարան: Թուչունները երգում էին անուշեկ ձայ-
նով: Երեխայի սիրտը միխուեցաւ: Նա չէր կամենում դասի
գնալ:—Յուրա գիշերն անցաւ: Առաւօտեան գովը տա-
րածուեցաւ օգի մէջ: Փոքրեկ ամպերը բարձրացան եր-
կինքը: Աստղերը մինը միւսի իետևեց շիշան: Գարունը իւր
բոլոր փառահեղութիւնով ամէն շնչաւորների իւր
հրաշալի տպաւորութիւնը ներշնչեց: Բնտանի կենդանի-
ները սէզապատ դաշտերուն առատ խոտը ռւտում են:

Թուչուններն իրանց աղուամազ ձագերե համար կերա-
կուր են տանում:

ՊԱՐԳԱՐԱԿՈՂ ԲՈՒԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ:

ա. Գարն ան այ ին գեղեցիկ օրեն սկսուեցան:
բ. Երկու մանուկ խաղում էին միմանց հետ: Առաջ
ջին մանուկը մեծ էր եւր ընկերեց:
գ. Յաղառը ու ուր պալատը գեղեցիկ կերպով դարդա-
րուած է:

§ 49. Նշանակած բառերը դրուած են առար-
կայի համար և նրան պարզաբանում են: Առարկայի-
ն պարզաբանող բառերը կրզիում են բարչազ: Որո-
շող բառերը մի որ և իցէ առարկայ ջոկում են
իրան նման ուրիշ առարկաներից:

Որոշող բառերը երեք տեսակ են՝ որպիսու-
թիւնը որոշող՝ գեղեցիկ, գաղանացին: Որքանութիւնը—
քանակութիւնը որոշող՝ երկա, առաջին, երրորդ: պատ-
կանելութիւնը—ումը լինիլը որոշող՝ եռգուարի, գի-
շայու, չոշացայու: *)

108. Հետևեալ նախադասութիւնների մէջ գտէք ո-
րոշող բառերը: Յուրա ձմեռն անցաւ: Գեղեցիկ գարունն
սկսուեցաւ: Բացուեցան անուշահոտ ձաղիկները: Զար-
դարուեցան ձմեռային մերկ ձառերը: Տարագնաց թըն-
չունները տաք երկիրներից վերադարձան մեր աշխար-
հը: Ծառերի տերենները բացուեցան: Խոտերի ցողունները

Ծանօթ. Վերջին տեսակ որոշողներին յատկացուցիչ
էլ են ասում:

Հաստացան: Վայրենի գաղանները թողին իրանց որչերը:—Երկնալին մարմինները գիշերները վայրում են հանդարտ:—Տաք ամառը կը գայ, օգոստիար պտուղները կը հասնին: Հարուստ հացաբումերը կը ծածանուին գաշտերում:—Մեր ուսումնարանում կան շատ աշակերտներ: Առաջին նստարանի վերայ նստած են հինգ հոգի: Ես նստում եմ երկրորդ նստարանի վերայ: Վերջին նստարանը գատարի է: Իմ ընկերը շատ լաւ է սովորում: Ես վերցրի ընկերիս գիրքը: Ուսումնարանի բագը շատ մեծ է:—Մեր սրբառէզը ընդարձակ է: Պարտիզի ծառերը պտղատու են:

Մեր գաղաքում կատ բարձր եկեղեցի: Եկեղեցու գմբէթը ծածկած է մետալով: Երկրորդ եկեղեցին փոքր է:—Գեղեցիկ թռչունը թռաւ:—Արամի թռչունը թռաւ: Մէկ թռչունը թռաւ:—Արամի մէկ գեղեցիկ թռչունը թռաւ:

109. Վերեի (107) վարժութեան մէջ գտէք ուսուցող բառեր:

110. Գրեցք ձեզանից կամ արտագրեցէք ձեր գասից մի քանի նախադասութիւններ որոշող բառերի եւ բաքանչւր տեսակի վրայ:

111. Որոշող բառերի տակը գիծ քաշեցէք՝

Ուր ես առաջ գնում, լինջ ոստիկ ծառի—ն,
Տես, չճգեն քեզ ալիք անդունդը ծովի—ն:
Ինչպէս անտէր որբիկ՝ թշուառ, անպաշտան,
Որ ընկել է ձեռքը շարաննենգ մարդկան:
Չես ունենալ, նստիկ, ազատութեան հնար:
Զոհ կը լինիս, ինդիկ, աւեաց շարաչար:

Ուսան գու ինձ, ոստգ վարդի,
Ուր ես ծլել, ուր ես ծաղկել,

Ո՞ր հովիտի կամ ո՞ր գաշտի
Զարդարանք ես գու եղել.
Որ անգութի ձեռն է քաղել
Քեզ քո թփից մարենական,
Կամ որ անգութն է քեզ սնկել
Այս աշխարհում պանդխտական:

ա. Յովի աւոնէս աշակերտը կարգում էր:
բ. Իմ ընկերը Յովհաննէսը կարգում էր:
գ. Մասկ սարը Ճենապատ է:

§ 50. Վերեի օրինակների մէջ նշանակեալ բառերը միևնոյն առարկալի անունն են, որին պարզաբանում են: Նոքա բացալալտ կերպով ցոյց են տալիս, թէ առարկան ու է կամ ո՞ւ է.—որ աշակերտը՝ Յովհաննէս, որ Յովհաննէսը՝ իմ ընկեր, որ սարը՝ Մասկ:

Միևնոյն առարկալի երկու անուններից մինը, որ պարզաբանում է միւսին, կոչվում է բացայացիչ: Բացալալտիչը առարկալի երկու անուններից այն է՝ որ որոշեալ լոդ չունի և սովորապէս նախադաս է:

112. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք բացալալտիչ բառերը:—Հայոց Արքար թագաւորը հաւատաց Քրիստոսին: Վարդան սպարապետը ազատեց Հայաստան աշխարհը պարսկական բռնութիւնից: Տրդատ թագաւորը Հայաստան աշխարհի հզօր վեհապետներից մինն էր: Հրազդան գետակը իւր սկիզբն առնում է Գեղամայ լճից և անցնելով Երևան քաղաքը, Մասիս սարի ստորոտում խառնվում է Երասմի գետի հետ:

113. Գրեցէք մի քանի նախադասութիւններ ձեր բարեկամների, ուսուցիչների, ծանօթների, ընկերների, ձեր քաղաքի, գիւղի, ձեր նահանգում եղած լեռների, գետերի, լճերի անուններից բացայատիչ բառերով:

ա. Աշակերտը գրում է:

բ. Աշակերտը գրում է դասը գըզով:

§ 51. Առաջին նախադասութիւնը համառօտէ: Երկրորդ նախադասութեան մէջ պարզաբանող բառերը գրուել են՝ սպառգէտիկ, համար և նախադասութեան միաբը լրացնում են: Լրացնող բառերը իմացվում են՝ ունչ՝ լնչ, ունչ՝ լնչին, ունչին՝ լնչին, ունչունչ՝ լնչին հարցերի միջնորդութեամբ:

114. Հարցերով գտէք լացնող բառերը: Հայը սկզբում է իւր որդուն: Որդին յարգում է իւր հօրը: Հայը որդուն գերք տուեց: Որդին հօրը շնորհակարութիւն արեց: Գիւղացին կորեց ծառը: Որսորդն սպանեց մի եղնիկ: Մայը կանչեց իւր աղջկան: Ես փողերս գրքի տուի: Զուը հարկաւոր է թռչուններին և կենդանիներին: Վաղելիս դու ոտի քարին լիմեցիս: Մենք ծառից պտուզ քաղեցինք: Դուք բարեկամնեց նամակ կոտանաք: Վարպետը ոսկուց շնեց գեղեցիկ շղթաները: Ես վաճառականնեց գնեցի մի գլխարկ: Երկրագործը օրավարը վարում է արօրով: Հայը ուրախանում է իւր զաւակներով: Մենք աշբով տեսնում ենք, ականջով լուսում ենք, քթով հստակում ենք, լեզուով ձաշակում ենք, իսկ մատնելով շշակում ենք:

115. Հետեւեալ սատրոգեալների մօտ լրացնող բառեր գրէք: Կովը կերաւ: Զինորսը բոնեց: Մայսո կարեց: Պարտիզանը քաղեց: Հնձողը հնձեց: Դերձակը ձեւեց: Հեւսնը շնեց: Վարժապահը կարեց: Մայրն ստա-

ցաւ: Գայլը պատառտութիւններ Արծիւը գեշատեց: Շունքը պահպանում է: (Շունքը պահպանում է հօտը լավշտակող գագաններից): Այս այլուր միանում է նաև մարդու և պարիսպական մասնակիցների մասին Այ ժմաշակերտը տանը ու ի հարդումէ գալը: Աշակերտը մի քանի ամ կարգում է դատը՝ ու վօրեւուն համար: Այսուհետեւ այսպիս այլուր մասնակիցների մասին պահպան այսպիս այլուր մասնակիցների մասին պահպան:

§ 52. Նշանակեալ բառերը գրուած են գործողութեան համար, բայց նորա միտքը չեն լրացնում: Նոքա ցոյց են տալիս գործողութեան այլ և այլ ուղղութանշնչը՝ ա, ժամանակը, թէ երբ է կատարվում գործողութիւնը, բ, աեղը՝ թէ ըրտնշը է կատարվում, գ. չեղը՝ թէ ինչպէս է կատարվում, դ. ժամանակը՝ թէ ինչպէս կամ չանչ անգում է կատարվում և վերջապէս ե, նպատակը, թէ ինչը՝ կը ուսումնառութէ կատարվում:

Ուրեմն պարագայական բառերը լինում են հինգ տեսակ՝ ժամանակական, տեղական, որակական, քանակական, պատճառական:

Պարագայական բառերը գլխաւորապէս հետեւեալ հարցերին են պատասխանում՝ երբ, ուր որտեղ, ինչպէս, որքան ինչքան՝ քանի անգամ, ինչու ինչու համար:

116. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք պարագայական բառերը և որոշեցէք նոցա տեսակները: Ինչպէս գեղեցիկ էք երգում սոխակը իւր երգը վարդի նորաբաց կոկոնի վերայ: Հազիւ մթնել էք և ահա մեզ սաստիկ տանջում էք ցուրտը և անձրեք: Հայերից շատերին բոնի բանտը տարան, շտաերին էլ բռնաբար

գերեւ վարեցին: Այսօր սաստիկ հրդեհ լաւանուեցաւ քաղաքի մի ծալըում: Բարեբազուաբար կըակը շուտ հանգաւ: Ես գիտեմ հայերէն կարգալ: Դու գիտե՞ս ուստեղէն և գաղիերէն խօսիլ: Մենք վրացեվար էլ գիտենք: **Մէկդի կանգնեցէք,** պաշտամանուեցէք քաջարար և կամաւ անձնատուը մի լինեք: Կամայ ակամայ պիտի տաք ձեր զէնքերը: Կամաց գնացէք, մենք էլ շուտով կը հասնենք ճեզ: Ամենենին փոյթս չէ, թէ դու յետ կը մնաս: Ես բոլորովին պատրաստ չէ, եթր դուք կանչեցիք: Խսպառ մոռացել էի, թէ խօսք եմ տուել: Շուտով գնանք, էլ աւելի շուտով սկսնք գործը: Բնաւ չի կարել յետաձել այն:

117. Բնութեան գեղեցկութեւնը է չէ սփոփում ծերունուն. նորա երեսը չէր ժպում այլ և ս. մահուան մերձարսութիւնը բոլոր վին շփոթել էր նորան: Գիւղացին միանակ կանգնած էր բլուի վերայ և ուշիով դիտում էր շջակայքը, ուր Արարիը ձրեւ սփուել էր իւր առատ պարզեները: Յաճախ մարդս այնպիսի բաներ է լսում, որ ստուգիւ դժուաբանում է հաւատալ: Մայր ստէպ թուղթ էր գրում իւր օրդուն, որը անիրաւաբար գրեթէ մոռացել էր նրան: Յանկարծակի՝ այն նեղութիւնից յետով, արեգակը կը խաւարի: Ուրիշների մասին խօսելիս՝ մեծապէս պէտք է զգուշանաս: Աստուած յալտնապէս խօսեցաւ Մոլսէսի հետ: Մոլսէսը ուժգին զարկեց գաւազանով և ապառաժից անմիջապէս առատ աղբիւր բղիւց: Վերջապէս՝ քառասուն տարուց յետով, Խորայելացիք հասան քանանացոց երկիրը: Հայը և որդի ընաաներար խօսում էին. Հայը մեղմաբար ցոյց էր տալիս որդուն կեանքի չարեքները: Բամբասանքը շարաչար խօցուում է մարդու սիրտը: Անշուշտ կը հասկանանք, եթէ մինչեւ անգամ հարեանցի պատ-

մէք մեզ Հայերի պարտութեան պատճառները: Ուշագիր մանուկը աւելի պիտի լսէ և սակաւ խօսէ: Ուր ես առաջ գնում: Ո՞րտեղից ես գալիս: Ուստի կը գաս, զարեբ բլրուլ: Արտաքուստ զարդարած էր, բայց ներքուստ մի էր ապակիանութեամբ:

118. Ե՞րբ էք տեսել, որ ալրին ոտեց գլուխ պֆնուի իւր զարդերով թանկագին: Աշխատասէրը միշտ հաց կունենայ, երբէք չի սովել: Երբեմն էլ լոյս, իսկ ալժմ եմ խաւար: Մերթ որոտում ես, մերթ ամպում ես, մերթ մթնում ես շատ, անձրեսում ես կաթել: Մերթ հարաւային հողմի նման հնչում ես խիստ սաստ, ես ըլնում եմ զգաստ: Լաւ է երբէք, քան անագան: Լաւ է ուշ, քան երբէք: Բժիշկը գեռ չէր հասել, հիւանդն արդէն մեռած էր: Առաւօտը կանուխ մենք եկեղեցի գնացինք: Յաւածագոյն լսել էինք, որ քահանան քարոզ պիտի կարգայ: Առ ալժմ մենք կարիք չունինք. ձեր օգնութիւնը առաջ ուրիշներին հասցըէք: Նախ մտածիր և ապա խօսիր: Նախ և առաջ նիւթը պատրաստիր և յետոյ գրիր: Աստուածոյ նախայինամութիւնը յաւետեան կայ:

119. Հարցերի օգնութեամբ վերսպիեալ վարժութիւնների պարագայական բառերը չորս խութք բաժանեցէք՝ որակական, քանակական, ժամանակական, տեղական, և ձեր յիշատակարանում արտագրեցէք ապագայի համար:

120. Վերոյիշեալ երեք վարժութիւնները (117,118
119) վերլուծեցէք տրամաբանօրէն և ցոյց տուէք գրւեստար և երկրորդական անդամները, երկրորդական անդամների տեսակները՝ որոշող, լրացնող, պարագայական և, եթէ կայ, բացայական բառերը—բերանացի և ապա գրաւոր:

ԱՌԱՍՏՈՒԱԾ իմ, ԱՍՏՈՒԱԾ իմ, ԻՆՉԵ՞ ԹՊՂԵցիր ԻՆՃ:
ՀԱՅՐ, հայր, վիշտը հոգիս իմ ՃՆՇՈՒՄ է շարաւար:

§ 53. Այն առարկալի անունը, որին մենք
խօսելիս՝ դիմում ենք, ի՞նչո՞ւ բառ է ասվում: Կոչա-
կան բառերը իրարից և նախադասութեան միւս
անդամներից բաժանվում են ստորակետով: Կոչա-
կան բառի առաջին վանկի վերալ շեշտ է դրվում,
եթէ նորա նախընթաց բառը շեշտ չ'ունի:

121. Գոէք կոչական բառերը:—Ասամ դու ինձ,
հստղ վարդի, ուր ես ծլել, ուր ես ծաղկել: Տէս, օքհ-
ներ իմ ձեռքի վաստակը: Օքհնիք, տէս, իմ ձեռքի վաս-
տակը: Օքհնիք իմ ձեռքի վաստակը, տէս: Ի՞նչ ես խըր-
խնջում, թմ ձի եռանդուն: Քոյթիկ, կանչեց քաջ պատա-
նին: Ով լուսին, լուսին, արդէն քանի դար... Գնա, եղ-
քայր, Աստուած քեզ հետ: Հալրիկ, դարձեալ թի աստղ
թռուաւ: Փուն եղբ, բալաս, աչքդ խուփ արա: Հազար
երանէ քեզ, մանուկ անբիծ, որ շուտ հեռացար դու
այս աշխարհեց:

ՄԻԱԿԱՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՍՈՒԹԻՒՆԻՆ

ա. Աշակերտը կարդում էր, գրում էր և նկարում:

բ. Ապակին թափանցիկ է, կոկ և գեւքարեկ:

գ. Կարապկար, Յովհաննէսը և Մկրտչը գնացն ու-
սումնաբան:

դ. Արեգակը, լուսինը և աստղերը երկնային մարմիններ են:

ե. Ուսուցիչը բերեց կապոյտ, կանաչ և կարմիր թանաք:

զ. Աըսորդն սպանեց վայրենի եղնիկ, այծ և կիսարու-

լուծելով առածած միաները, միան նկատումներ՝

ա. Առաջին և երկրորդ նախադասութեան մէջ մի ենթա-
կայ մի քանի ստորոգեալներ ունի:

բ. Երրորդ և չորրորդ նախադասութեան մէջ մի ստորո-
գեալ մի քանի ենթակայ ունի:

գ. Հինգերորդ նախադասութեան մէջ մի առարկայի հա-
մար դրուած են մի քանի միանման որոշողներ:

դ. Վեցերորդ նախադասութեան մէջ մի գործողութեան
համար դրուած են մի քանի միանման լրացնողներ:

ե. Այդ նախադասութիւններից իւրաքանչիւրը կարող ենք
այնքան նախադասութեան վերածել, որքան կրկնած անդամ կայ.
օրինակ՝ առաջին նախադասութիւնից մնաք կը կազմենք՝ 1. Ա-
շակերտը գրում էր: 2. Աշակերտը կարդում էր: 3. Աշակերտը
նկարում էր:

§ 54 Այն նախադասութիւնը, որի մէջ ան-
դամներից մինը կամ միւսը կրկնուած է մի քանի
անդամ, կոչվում է միաբարձր նախադասութիւն:

§ 55. Այն նախադասութիւնը, որի մէջ կրկ-
նուած անդամներ չ'կան, որ իւր մէջ միայն մէկ
միտք է ամփոփում, կոչվում է պարզ նախադասութիւն:

§ 56. Պարզ նախադասութեան մէջ զլխաւոր
և երկրորդական անդամները միմեանցից ոչ մի կ-
տով չեն բաժանվում:

§ 57. Միաւորեալ նախադասութեան մէջ
կրկնուած անդամները միանցից բաժանվում են
ստորակետներով: Ստորակետ չի գրվում և բարից
առաջ միայն, եթէ ու չի առաջ չէ: Ես գիտեմ և
կարդալ, և գրել, և նկարել: Ես գիտեմ կարդալ
գրել և նկարել:

122. Հետեւալ պարզ նախադասութիւններից կազ-
մեցիք միաւորեալ նախադասութիւններ: Ցորենը ար-
դէն հասել է. գատին արդէն հասել է: Գետերը սառեւ

են. լճեսք սառել են: Խնձորենին ծաղկում է գարնանը. տանձնենին ծաղկում է գարնանը: Գոբարեսք խոնաւ տեղերում են ապօռում: Գօդոչները խոնաւ տեղերում են ապօռում: Բգէզները վնաս են տալիս բոյսերին. թըթօւրները վնաս են տալիս բոյսերին: Մոծակները տաք եղանակին են լոյս ընկնում. Ցլակները տաք եղանակին են լոյս ընկնում: Աղուէսը խորամանկ է. աղուէսը հարպիկ է. Արջը դանդաղկոտ է: Ակեւուը մագլում է ծառերի վերայ. սկեւուը ցատքոտում է ծառերի վերայ. Շունը մսակեր կենդանի է. կատուն մսակեր կենդանի է: Ծլծեռնակը տարագնաց թռչուն է. սոլսակը տարագնաց թռչուն է: Ջին ընտանի կենդանի է. ձին խոտակեր կենդանի է: Կովը ընտանի կենդանի է. կովը կաթնասուն կենդանի է. կովը չորտուանի կենդանի է:

123. Կազմեցէք միաւորեալ նախագասութիւններ: — Գլուխը մարդուս մարմնի անդամն է. ձեռները մարդուս մարմնի անդամներն են. ոտները մարդուս մարմնի անդամներն են: Աշնանը գիւղացին սերմում է օրավարը. աշնանը գիւղացին ցաքանում է օրավարը: Գիւղացին վաղ վեր է կենում. գիւղացին լուացվում է. գիւղացին աղօթում է Աստուծուն. գիւղացին ձեռք է առնում իւր ծանը գործը: Գիւղացին ցորենը կալսեց. գիւղացին հացահատիկները ջաղացը տարաւ. գիւղացին ցորենից ալիւր աղաց. գիւղացին ալիւրը տուն բերեց. գիւղացին ալիւրեց թաժայ հաց թխել տուեց.

124. Հետեեալ միաւորեալ նախագասութիւնները պարզե վերածեցէք. — Իուն և չդջիկը գիւերային կենդանիներ են: Կովը և ձին ընտանի կենդանիներ են: Ջին և շունը մարդուս համեմատած կամաց է:

Ճերն ու ոչխարները մեզ կաթ և միս են տալիս: Խընձորը և տանձը ախորժահամ պատուղներ են: Գագարը, սոխը, սխառը և բողկը բանջարանոցի բոյսեր են: Բագերը թռչում են, լողում են և ման են գալիս: Գայլերն զգուշ են և երկշու: Եղջերուն վազում է արագ, խրամատներից ցատքում է համարձակ և գետերից լողալով անցնում է:

125. Հետեեալ գոյգ նախագասութիւններից միաւորեալ նախադասութիւններ կազմեցէք, կապելով նոց՝ բայց, այլ բառերով: — Կէտը կաթնասուն կենդանի է. կէտը թռչուն չէ: Երկիրն է շարժվում. արեգակը չի շարժվում: Կշտանալու համար չի կծում օձը. չարութեան համար է կծում օձը: Լուսինը լուսաւորում է. լուսինը չի տաքացնում: Ցորենը գեղեցիկ չէ. ցորենն օգտակար է: Մանուկն ընդունակ է. մանուկը ծոյլ է. Առաւած երկար է սպասում. Աստուած իխոս է պատժում: Եղէքը քամու ձնշումից կրանում է. Եղէքը քամու ձնշումից չի կոտրվում: Տանձը համեղ է. տանձը թանգ է: Ռոկին փոքր է. ոսկին թանգ է: Կուր գետը մեծ չէ. Կուր գետը օգտակար է: Էջմիածինը հեռու է. Էջմիածինը մեր սրտին մօտ է: Անին կործանուած է. Անին սիրելի է: Կայճակը գարչուրելի է. կայճակը օգուտ է: Գործելուց մի վախենար. անգործութիւնից վախեցիր: Չարութեանը չարութեամբ մի պատասխանիր. չարութեանը բարութեամբ պատասխանիր: Փեզնից խնդրովին մերժիր. քեզնից խնդրովին օգնիր:

ՅԱԴԱՐԵԱԼ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԻՒՆ

ա. Խերսէու, որ մեր նշանաւոր կաթուղի կունեցի մեջներ մեջնեն է ը, շատ ազգագուտ դործեր է կատարել: Կան այնպիսի մարդեկի, որ ո՞նք իւրանց պատասխանիր:

կանութեւնը սրբութեամբ չեն կատառում:
գ. Ես կատարում եմ, ենչ որ ինձ յանձնում են:
դ. Ու ո ո քէշն է, այնտեղ արծիւներ են ժողովում:
2. Բոյսերը զուարթեանում են, երբ ո ո անձը է գալիս:
3. Մանուկները աշխատեցին, որքան կարողացան:
4. Դու կը պատժուիս, ինչպէս պատժ վում են
ծոյլ մանուկները:

5. Ես աշխատում եմ, որպէս զի լաւ մարդ դառնամ:

Վերոգըեալ նախադասութիւններից իւ բարքանչեւը երկու
մասից է բաղկացած, որոնցից ամէն մի մասը առանձին նախա-
դասութիւն է և ունի իւր գլխաւոր և երկրորդական անդամ-
ները, Յ.յ. երկու նախադասութիւններից մինը անկախ է, ինքն
իրան պարզ և որոշ հասկացվում է՝ իսկ միւսը, որ մենք բաժա-
նած ենք նշանակել, կախումն ունի առաջինից և առանց նորան
պարզ չի հասկացվում; Կօտրազիր նախադասութիւնները, ընդ-
հակառակն, դրուել են միս նախադասութիւնների միութը պար-
զաբանելու համար: Եթէ անկախ նախադասութիւններին հարց
տանք, մենք կը տեսնենք, որ նօտրագիր նախադասութիւնները
Ճետ այն հարցերին կը պատասխանեն, որոնց պատասխանում են
պարզ նախադասութեան երկրորդական անդամները:

§ 58. Ենթական, ստորոգեալը, որպէս և նա-
խադասութեան միւս անդամները, կարող են պար-
զաբանուիլ ոչ միայն առանձին բառերով, այլ և
ամերոջ նախադասութիւններով:

Այն նախադասութիւնը, որ պարզաբանում է
միւս նախադասութեան որ և իցէ մի անդամին,
կոչում է երկրորդական նախադասութիւններուն:

Այն նախադասութիւնը, որից երկրորդականը
կախումն ունի, կոչում է գլխուոր:

Գլխաւոր և երկրորդական նախադասութիւնը
միասին կոչվում են բաղադրեալ նախադասութիւններուն:

§ 59. Երկրորդական նախադասութիւնը գլ-
խաւորից բաժանվում է ստորակէտով, իսկ եթէ
երկրորդականն ընկած է գլխաւոր նախադասու-
թեան անդամների մէջը, ապա բաժանվում է եր-
կու ստորակէտով, երբեմն բութ և ստորակէտով:

§ 60. Երկրորդական նախադասութիւնները,
իրանց կատարած պաշտօնին նայելով, լինում են՝
բացալատիչ, որոշող, լրացնող և պարագայական:

126. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գտէք
երկրորդականները, հարց տուէք և լուծեցէք, որոշելով՝
թէ գլխաւոր նախադասութեան որ անդամի համար են
դրուած: Երուաղէմի գոները փակում են, երբ արեգա-
կը մայր է մտնում: Երբոր հասկերը մէջ ցորենի հա-
տիկներն ամրանում և մգանում են, այն ժամանակը
հնձում են: Երբոր վառարանի կըակը մոխրով ծածկ-
վում է, ապա ծածկում են ծխնելոյզը: Սեր նախահայ-
րեն ապրում էին այնտեղ, որտեղից բղխում են Տիգ-
րիս և Նիբրատ գետերը: Անտեղ է մարդկութեան օրո-
րոցը, որ բարձրանում է ծերոնի Արաքատը: Աբահա-
մը եւր գերգաստանով գաղթեց այն աշխարհը, որը Տէ-
սը հրամայել էր նորան: Սառն քամիները գալիս են այն
տեղից, որ տարածուած է սառուցեալ ովկեանուա: Սո-
խակը երգում էր այնպէս, որ աշխարհ ամենայն նորան
էր լսում: Առիւծն այնպէս մռնչաց, որ բոլոր գագան-
ները սարսկցան:

127. Որսորդն ունի մի հրացան, որը շատ ճիշտ է
զարկում նախադասկին: Ծառի վերալ թառած էր մի
թոշուն, որի վետաւըները գեղեցկապէս փայլում էին:

Փոքը ի չուտերը, որոնք դեռևս չ'գիտէին իրանց թե-
երի ոյժը, զարհուրական ձայներ էին բարձրացնում:
Աշխատասէր մեղուն, որ ծաղիկներից իրան համար
մեղը էր հաւաքում, ծանրաբեռնուած թռուալ դէպի վե-
թակը: Ի՞նչ ամսորժալուր է հովուական սրնգի ձայնը
մայիս ամսին, երբ նա մի քարի վերայ նստած՝ սուլում
է ինքնագոհ: Դուք չկարծէք, թէ նա միայն իւր սրան
ուրախութեան համար է ածում, նա գորանով հասկա-
ցընեց իւր հօտին, թէ ժամանակ է ժողովուիլ իւր չորս
կողմը և գնացքն ուղղել գէպի փարախը, ուր սիրունիկ
գառները սպասում են նրանց:

128. Հայերը, որ աշխարհիս ամենահին ազգերից
մինն են, մի ժամանակ ունեցել են շատ քաղաքներ: Անի
քաղաքը, որ իւր աւերակներովն անգամ սքանչելի է,
ունեցել է հոյակապ ճարտարարութառ շէնքեր: Տիգրան
ու, որից գողում էին հին ժամանակուայ հզօն ազգերն
անգամ, ցաւալի վախճան ունեցաւ: Եփրատն ու Տիգ-
րիսն այն գետերն են, որոնք բզիսում էին գրախտեց:
Մասիսը, որի գագաթը միշտ ծածկուած է ձիւնով, գործ-
վում է նըւեանի և կջմիածնի հանդէպը:

129. Գնանք ժողովինք գաշտերից, ինչ որ Արարաք
պարզեել է մեղ: Կան այնպիսի տեղեր, ուր ի հնուց
բոյսերի վթելուց սեահող է գոյացել: Առաւօտը, երբ
անկողնեցդ վեր ես կենում, հազար սարի ծայրից ամպն
ու ծուխը երկինք են բարձրանում: Դրախտ ես ուզում,
այստեղ կաց, այսպէս կաց: Երբ սարումը հերք է պառ-
հում, էլ շաբաթով ու ամսով չեն թողում, որ հեռանայ:

§ 61. Երբեմն խօսող անձը՝ իւր ասածներին
որպէս հաստատութիւն, բերում է ուրիշների ասած
բառերը նոյնութեամբ: Այն նախադասութիւնը, որ

ուրիշի խօսքերից է կազմուած, կոչվում է յա-էլեալ
նախադասութիւն:

§ 62. Յաւելեալ նախադասութիւնից յետու գըր-
վում է միջակէտ և երկու կողմից չակերտներ: Երբ որ
մի քանի անձանց խօսակցութիւն է պատմվում, այն
ժամանակ մէկի ասածից առաջ դնում են չակերտ-
ներ, իսկ միւսինի առաջ - ենթամնայ («», «»)
և չակերտ:

130. Կէտերը և հարկաւոր նշանները գըէք: - Եր-
բոյ հայ նախաբաները կամենում էին իրանց թագա-
ւորեց բազոքել պարսկց, արքային, եկան Ս. Սահակի
ժօտ և առաջարկեցին, որ նա էլ միաբանի իրանց հետ:
Արժանաւոր հայրապետը պատասխանեց Երբէք ես
չեմ փոխարինել իմ հեւանդ ովեալը, ութեշի առողջ
գաղանի հետ:

Ցիսուսը, երբ վերջին գերեսը գնում էր աղօթք
անելու, սասաց իւր աշակերտներին Արթուր կացէք և
աղօթեցէք, որ փորձութեան մէջ ընկնիք:

Գարունն ասաց Նս կեմ գիւղացուն հաց տուողը:

Ամառը պատասխանեց Զես կարող առալ, եթէ ես չկա-
մենամ:

Գիւղացին մտածեց ինքն իրան Ամենայն ինչ Աստու-
ծոյ ձեռքին է:

§ 63. Եատ անգամ նախադասութեան ան-
դամների մէջ մտնում է մի առանձին նախադա-
սութիւն, որ ամենեին կամ չունի գլխաւոր նա-
խադասութեան հետ և կարող է առանց մտքի
պարզութեանը խանգարելու գուրս ձգուիլ: Ալդ-
պիսի նախադասութիւնը կոչվում է միանկեռը



— Դուք, երևի, շուտով կը վերադառնաք քաղաքից: Մենք, շատ հաւատական է, ամենեին չ'վերադառնանք:

§ 64. Նատ անգամ բաղադրեալ նախադասութիւնը կարող է կազմուած լինիլ մի քանի ընդարձակ պարզ նախադասութիւններից՝ համազօր նշանակութեամբ: Համազօր նախադասութիւնները բաժանվում են միմեանցից միջակէտով, իսկ եթէ շատ համառօտ են, ստորակէտով են բաժանվում:

131. Գալիս է ամառ, այրող եղանակ,
Անխոնչ վաստակի պաղի ժամանակ.
Իւր աստուածեղին ջերմութեան հոգին
Կենսատու շնչով ծաւալէ արփին.
Հասել է ծիրան, տանձը մեղրածոր.
Կարմիր վարդի պէս փայլում է խնձոր.
Սաթանման դեղին կախուած է ողկոյզ.
Մանկտին գրաւում է լոր, նուռե թուզ.
Սեխով, ձմերկով լիքն է բուրաստան.
Ուկեայ հոսանքով ծփի անդաստան.
Եւ արտօրայքի ծանրացած հասկեր,
Խիստ հիանալի նկարեն պատկեր:

§ 65. Երբոր գլխաւոր նախադասութիւնից յետոյ գալիս է միաւորեալ նախադասութիւն, որի կրկնուած անդամները մի տեսակ համրանքի ձև են ընդունում, այն ժամանակ այդ երկու նախադասութիւնների մէջ բութ է դրվում (՝):—Գիւղացին քաղաքում շատ իրեղիններ գնեց՝ շաքար, թէլ, շորեղին, կաւեղին, պղձեղին և ուրիշ տնալին պարագալ:

§ 66. Բաղադրեալ նախադասութիւնը միաւորեալից և միաւորեալը բաղադրեալից բաժանվում է միջակէտով:

132. Հետևեալ նախադասութիւնները կարգացէք մինչեւ վերջակէտը, գլխաւոր մասերը անջատեցէք իրացեց և նախադասութեան ամէն մի մասը առանձին առնելով լուծեցէք:

Կանայքը կթի տաւարի հետն են լինում, կաթը ժողովում, իւղ ու պանիր շնչում. տղամարդիկ տաւարը սարն են տանում, կամ բուրդ ու իւղ են տանում փողոցը ծախում, իրանց տան պակասութիւնը լրացնում: Միայն այս չէ կանանց գործը. ցերեկը ճախարակ են մանում, շալ, գորդ կամ կապերտ են գործում և իրանց օրը ուրախ, միամիտ անցկացնում: Էլ ինչ ասել կուգէ, որ հարս ու աղջիկ ալստեղ կուժ ու ձիգ անելով չեն ման գալիս, կամ երեսները կալնում, ինչպէս տանը: Մէկ տան պէս են, և ում օրէն (վրանը) մտնես, ամենքը առողջ, ուրախ և զուարթ են. այն օդի ու ջրի, այն ծաղկի ու կանաչի հոտն ու համը առնողի հոգին ու գոյնը լինչ կը լինի ապա: Երբ սարումը հիւր է պատահում, էլ շաբաթով ու ամսով չեն թողնում, որ հեռանայ, աղբիւրների քչքոցը, ջրերի նրբացոցը, ծառերի սըլսըլոցը, թոշունների ծլվըլոցը, հովուի սրինգը, գառան, ոչխարի ու տաւարի բառացը՝ այս բոլորը, կարծես, ձեղ ասում են. «Դրախտ ես ուզում, ալստեղ կաց, այսպէս կաց. սիրտդ անմեղ, միտքդ եստակ:»

II ՄԱՍՈՒՆՔ-ԲԱՆԻ

Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՌԻՆ

§ 67. Ամենայն առարկայ անուն ունի (§ 3):

Առարկաների անունները կոչվում են ԳՐԱԴԱՆՑՈՒԹՅԱՆ:

§ 68. Խնչպէս տեսանք՝ առարկան, ուրեմն և գոյական անունը նախադասութեան մէջ կատարում է՝ ենթակալի, բացալուտչի, լրացնողի և պատկանելութիւն ցոյց տուող որոշողի պաշտօն։ Նա կատարում է և ստորոգեալի պաշտօն օժանդակ բառերի օգնութեամբ (եմ, լինեմ)։ Երբեմն կարող է և պարագայական բառերի պաշտօն կատարել։

133. Կատացէք 132-դ վարժութիւնը, գոյական անունները գոյէք և իմացէք թէ երաքանչիւր նախադասութեան մէջ ընչ պաշտօն են կատարել։

134. Հետեւեալ գոյական անունները ենթակայ ընդունելով՝ նոյն մօտ աւելացրէք գոյական ստորոգեալներ և բառի օգնութեամբ։ Ոսկին, շուշանը, մանուշակը, ուռենին, Երեմանը, Երասմը, Էջմիածինը, Հրացանը, Խաղողը, Ճնձուլը, կովը, գայլը, արծիւր, առիւր, ցորենը, գարին, տառեխը, տունը, ջուրը, հացը... 135. Այնպիսի նախադասութիւններ կազմեցէք, որոնց մէջ հետեւեալ գոյականները ստորոգեալ լինին։ Պառակ է, թուփ է, ծաղիկ է, բանջար է, վալուկին գագան է, ընտանի թռչուն է, չորքոտանի կենդանի է, խաղալք է, գասական առարկայ է, սունկ է, թռւանը միջատ է, երկարգործական գործիք է, ձիու կերակուր է, մարդու ընկեր է:

136. Հետեւեալ նախադասութիւններին գոյական սրոշողներ աւելացրէք՝ ... պատերը բարձր են (թնչի պատերը) ... գմբէթը փալլում է ... ձղները կոտրատվում են ... լանջը կանաչել է ... թերթիկները թառամքել են ... գերքը կորաւ (ում գերքը) ... ոտք կոտրուեցաւ ... աչքը ցաւում է ... թևերը թուլացան ... շունչը կարուեցաւ ... տունը գեղեցիկ է ... այգին մեծ է ...

137. Հետեւեալ նախադասութիւններին աւելացրէք գոյական բացալայտիչներ՝ Վարժապետը եկաւ (որ վարժապետը): Ընկերու գնաց: Խղարշդ աշխատում է: Կարավեար աշխատասէր է: ... թագաւորը պատերագմասէր էր: ... Հայկը յաղթանգամ էր: ... Արամ հզօր էր և հայրենասէր: ... գետերը բզիսում են Հայատանից: ... սարերը կանգնած են դէմ առ դէմ: ... քաղաքը շինած է ծովի եզերքին:

138. Հետեւեալ նախադասութիւններին աւելացրէք գոյական լրացնողներ՝ Գիւղացին հերկում է (թնչը, թնչով): Գիւղացին կազմեց արօրը (թնչից): Նա շատ փող տուեց (թնչին): Ուսուցեցը պարգևեացրեց (ում, թնչով): Հարուստներն օգնում են (ում): Օդը և ջուրը հարկաւոր են (ում և թնչին): Զուրք մենք ստունում ենք (թնչից):

139. Գոյէք գոյական պարագայականները: Առաւոտը մենք գնում ենք ուսումնարան: Երեկոները ուշադրութեամբ սովորում ենք մեր գասերը: Անցեալ տարի մենք ամարանոց գնացինք: Այս տարի մենք մնում ենք քաղաքում: Եկեղեցում մարդիկ աղօթում են: Ցերեկը շոգ է լինում, գեշերը հոգ: Ես նորան սրտանց սիրում եմ: Նա երեսանց բարեկամ է քեզ:

Գոյական անուան սեռ:

Հայկը գնաց ուսումնարան, իսկ Հայկանուշը տանը ժնաց:

Աշակերտը պատրաստում էր դասը, իսկ աշակերտուհին կար էր անում:

§ 69. Հայք և աշակերտ բառերը տղամարդու անուն են. Հայկանուշ և աշակերտուհի կին մարդու անուն են:

Այն գոյական անունները, որոնք այր—մարդկանց են լատուկ, կոչվում են արտիստ սեռի գոյականներ. նոքա՝ որոնք կին—մարդկանց են լատուկ՝ կոչվում են իգորիան սեռի գոյականներ:

Մարդկանց անուններից շատերը արականից իգական դարձնելու համար՝ վերջից առնում են անուշ, ս-հի և բ-ի մասնիկները:

§ 70. Բայց գոյական անունների մեծագոյն մասը չի ընդունում իգական մասնիկներ. այդպիսիների սեռը որոշում ենք՝ իրանց նշանակութեանը նայելով:—Եղբայր, քոյր, մանուկ:

§ 71. Այն գոյական անունները, որոնք կարող են և արական սեռի լինիլ և իգական, կոչվում են հասարակ սեռի գոյականներ:—Մանուկը հասարակ սեռի գոյական անուն է:

Անշունչ առարկաները սեռ չունին:

140. Հետեւեալ նախադասութիւնների մէջ գոյականների սեռերը որոշեցէք:—Տիգրանը և Տիգրանուհին քոյր ու եղբայր էին: Հայրն ու մայրը երանց մօտ կան-

չեցին Հայկին և Հայկեանդուխտին: Հայկանուշը իւր ընկերների հետ գաշտում ծաղիկներ էր քաղում: Թագաւորը և թագուհին ժողովրդի վերայ խնամք ունին: Ուսուցիչներն և ուսուցչուհիները բարեխղճաբար կատարարում են իրանց պաշտօնը:

141. Հետեւեալ գոյականների սեռը որոշեցէք:—Նըեխայ, մանուկ, մանկամարդ, տղամարդ, կին—մարդ, կինարմատ, պատանի, ծեր, պառաւ, հայր, մայր, կոյս, քահանայ, բնիկ, գաղթական, քաղաքացի, գիւղացի, ոչխար, մաքե, խոյ, հաւ, մարի, որձակ, աքաղազ, ձի, երեվար, մատակ, խոզ, մէրուն, վարազ, եղնիկ, եղջեռու, կով, եղբ, ցուլ:

ա. Քաղաք, գետ, մար, գիւղ, մարդ, զօրապետ, թաղաւոր:
բ. Երեան, Երասխ, Մասիս, Երնջակ, Մինաս, Վարդան:

Առաջին տողի գոյական անունները առ հասարակ շատ առարկաների կարող են պատկանել:
Երկրորդ տողի գոյական անունները, ընդհակառակն, միայն մի հատ առարկայի յատուկ են:

§ 72. Գոյական անունները երկու կարգ են բաժանվում՝ հասարակ գոյական տնուն, որ բազմաթիւ նոյնասեռ առարկաների կարող է պատկանիլ, և յարակ, որ միմիայն մի հատիկ առարկայի պիտի պատկանի:

§ 73. Յատուկ անունները միշտ գլխատառով են գրվում: Գլխատառով են գրվում նաև ազգանունն ու հայրանունը, որոնք նմանապէս յատուկ են:

142. Արտագրեցէք առաջ հասարակ և առաջ յատուկ անունները, ուր որ հարկաւոր է՝ գլխատառ գրե-

թէք: + Ծառ, գիւղ, բոյս, հայ, համկ, բեսք, պետրոս, պօդոս, հաւ, հաւատ, համբարձում, քած, քար, սէր, սեր, սէմ, մարդ, մերք, մօրուք, մարգար, մասդարէ, մինաս, մեղր, կուգ, կոյս, երազ, երասխ, զանգակ, զանգու, գեղամ, մասիս, վանք, վան, կար, կարին, տէր, տեգ, տիգբան, գրիչ, գրիգոր, հորթ, յորդանան, արալատ, արայ, երուսաղէմ, երազ, եկեղեցի:

143. Գրեցէք ձեր յատուկ անունը, հայսանունը և աղգանունը. գրեցէք ձեր հօր, մօր, վարժապետի անունը, հայրանունը և աղգանունը. գրեցէք թէ թագաւորւթեան մէջ էք ապրում, որ քաղաքում, որ գեղում, որ գետի, ծովի, սարի մօտ:

144. Գրեցէք մի քանի նախադասութիւններ, որոնց ենթական յատուկ անուն լինի, իսկ ստորոգեալը միւնոյն առարկալի հասարակ անունը: — Կարապետը դարբին է և այլն:

Պոյական անունների թիւր: — Հաւաքական անուն:

ա. Գիրք, հաց, ծառ, քար, վայտ, կացին, բաժակ:

բ. Գըքեր, հացեր, ծառեր, քարեր, կացիններ, բաժակներ:

§ 74. Պոյական անունը երկու թիւր ունի՝ եղակի և յոգնակի (§ 6.): Յոգնակի թիւր կազմվում է եղակիից՝ բառի վերջից աւելացնելով էր կամ նէր մասնիկը, երբեմն և տառը:

Միավանկ բառերը եր մասնիկն են ընդունում յոգնակի թւում. բազմավանկ բառերն ընդունում են նէր մասնիկը: Եթէ բառը մի և կէս վանկ ունի նա ևս նէր մասնիկն է առնում. — ճրագներ, կրակներ

Միավանկ բառերից կազմուած բազմավանկ բառերը կարող են նէր մասնիկի փոխանակ եր մասնիկն առնել. — տանուտէր — տանուտէրեր, նախահայր — նախահայրեր:

Յատուկ գոյական անունները յոգնակի թիւր չունին (ինչի):

145. Հետեւեալ գոյական անունները յոգնակի դարձրէք: — Քար, պատ, մեխ, միս, շուն, սեղան, գերան, բերան, մառան, դարան, գաւազան, մատանի, գինի, հոգի, որդի, աղանի, եկեղեցի, տղայ, քահանայ, կաթայ, գաթայ, ճամբայ:

Ոտ, ձեռ, կաթ, եղ, գառ, նուռ, դուռ, փուռ, թոռ (ոտք, ձեռք...):

Ուկր, ասող, կըակ, ճըագ, գլուխ, բլուր, սըահ, մսուր, մեղր, մրուր:

Հօրաքոյր, մօրաքոյր, տանուտէր, նախահայր, նախամայր:

Ոչխար, ոչխարներ — հօտ, զինուոր զինուորներ — գօքը:

§ 75. Երբ շատ միատեսակ հասարակ գոյական անուններ՝ մետովն ժաղաված, փոխում են իրանց հասարակ անունը և եղակի լուսէ մի նոր անուն են ստանում, այդ նոր ստացած անունը կոչվում է հաւաքական անուն: — Հօտ, գօքը:

146. Հետեւեալ յոգնակի հասարակ գոյական անուններից՝ եղակի հաւաքական գոյական անուններ կազմեցէք: — Խոտեր, ծառեր, մարդեկ, թաշուններ, ձեր, անասուններ, խոզեր, զինուորներ...

147. Հետեւեալ հաւաքական գոյականները հասարակ գոյականների դարձրէք: — Հօտ, չոկ, անդեայ, ե-

ըամակ, հորան, վոհմակ, պար, երամ, զոլեր, տարմ,
վտառ, հուլ, բուլ, գէզ, շեղջ, շեղջ:

Բ. ԱՇՊԱԿԱՆ ԱՆՈՒԻՆ

Պարտիզում կան գեղեցիկ ծաղիկներ:

Եթէ և ային մարմնները զարդարում են երկնակամարը:

§ 76. Նշանակեալ բառերը ցոյց են տալիս
առարկայի որպիսութիւնը: Առարկայի որպիսու-
թիւնն ես իւր որոշ անունն ունի (§ 8.): Որպի-
սութիւն արտայայտող անուններին ասում ենք
ածական անուն:

§ 77. Ածական անուան պաշտօնն է՝ գրուիլ
գոյական անուան մօտ և որոշել նորան ուրիշ գոյա-
կան անուններից. բայց ածականը՝ եթէ մենակ մնայ,
կարող է կատարել նաև ենթակայի, լրացնողի և
սուրոգեալի պաշտօն:

148. Հետեւեալ նախալասութիւնները վերլուծե-
ցէք և գտէք որպիսութիւն ցոյց տուող որոշող—ածա-
կան անունները:—Մենք արժանացանք ուրախ մայիսին:
Կապոյտ երկնքում փայլուն աստղերը պարզ գիշերին
գիւթական գեղեցկութիւն են տալիս: Առաւօտեան
արշալուսին քաղցրաձայն սոխակը երգում էս վարդի
ծաղկապատ թփի վերայ: Երեկոյեան վերջալուսին
սրաթե ծիծունակները վերադարձան գէսլի լրանց
փոքրեկ ձագերը: Գարնանային անձրենները կեանք են
տալիս գաշտային բոյսերին և ցանքերին: Հետսխային
եղջերունները տեղացի աղքատ բնիկներին անփոխարե-
նելի ծառայութիւններ են մատուցանում:

149. Հետեւեալ գոյական և ածական անուններից

այնպիսի նախագասութիւններ չինեցէք, որ գոյականը
ենթակայ մինե և նախաղաս, իսկ ածականը՝ օժանդակ
բառի հետ, ստորոգեալ:—Սուր դանակ (դանակը սուր
է). ծանը մուրճ. թեթև կացին. պողպատէ դուր. փոք-
րիկ եկեղեցի. մեծ աշտարակ. բարձր գմբէթ. լայն փո-
ղոց. վատ ճանապարհ. սառը ջուր. թափանցիկ ապակի.
ոսկի մատանի. փայտէ տուն. պարսկական կապերտ.
արաբական նժոյգ:

150. Հետեւեալ ածական անունների մօտ գրէք ե-
րանց համապատասխան գոյական անունները:—Կար,
միք, կապոյտ, գեղին, կանաչ, գուշ, մոխրագոյն, նա-
ըընջագոյն, շագանակագոյն, մանելշակագոյն, սպիտակ-
ուե, մեծ, փոքր, հաստ, բարակ, նուբը, նօսը, թանձը,
երկար, կարճ, լայն, նեղ, ընդարձակ, համառօտ, ծանը,
թեթև, առողջ, հիւանդ, բարձրահասակ, կարձահասակ,
ամենի, վիթխարը, ահռելի, նազելի, հաճելի, կոր,
ծուռ, ուղեղ, կոյս, կաղ, բութ, սուր, ցածր, բարձր,
ցածր, ստոր, ցանցառ, խուլ, համբ, խոնաւ, չոր, տիսուր,
ուրախ, գուարթ, թթու, քաղցր, դառը, տտիպ, տաք,
սուռը:

151. Հետեւեալ ածականների մօտ ևս գրէք ե-
րանց համապատասխան գոյականները:—Քաղաքային,
ծովային, ջրային, ցամաքային, դաշտային, երկնային,
հետսխային, հարաւային, երկրաւոր, երկնաւոր, գիւղա-
կան, տնային, բնական, կենդանամիան, բուսական, ա-
ռեւելեան, արևմտեան, պարսկական, հայկական, հնդ-
կական, առաւօտեան, երեկոյեան, տարեկան, ամսա-
կան, բուսեղին, մսեղին, խմորեղին, քարեղին, փայտե-
ղին . . .

**Որակական և յարաբերական
ածականներ:**

Առաջ խօսքը տուն կը շինի, դառը խօսքը տուն կը քանզի:
Փոյթէցն առանք տաքէցն տան չափ ահար չի լինում:

Առաջ, դառը, ահար ածականները գոյականի խական որպեսութիւնն են ցոյց առլիս. դոքա առարկայի անբաժան յատկութիւններն են. դոյտէցն և տաքէցն ածականները թէւ նոյն պէս ցոյց են առլիս գոյականի որպիսութիւնը, բայց այդ որպիսութիւնները առարկայի ընութիւնից չեն բղխում, այլ ցոյց են առլիս նորա ուրիշ առարկանների հետ ունեցած յարաբերութիւնը:

§ 78. Ածական անունը երկու տեսակ է՝ որոշական և յարաբերական:

Որակական ածականը ցոյց է տալիս գոյական անուան բնական որպիսութիւնը: Որակական ածականի ցոյց տուած որպիսութիւնը կարող է աւելանալ և պակասիլ՝ մի առարկայի վերաբերութեամբ շատ լինիլ, իսկ միւսի վերաբերութեամբ սակաւ:

Յարաբերական ածականը ցոյց է տալիս առարկայի ստացական յատկութիւնը:

Յարաբերական ածականի ցոյց տուած յատկութիւնը չի կարող աւելանալ կամ պակասիլ:

§ 79. Որակական ածական անուններն ունին երեք համեմատութեան աստիճաններու տարրեան և գերարարութեան: — Քաղցր, աւելի քաղցր, ամենաքողցր:

§ 80. Դրական աստիճանը պարզապես գոյականի իշշպիսի լինիւն է ցոյց տալիս: — Մեծ, փոքր, թեթև, ծանր, ցածր, բարձր:

Բաղդատական աստիճանը՝ մի առարկայի միւսի հետ համեմատելով, ցոյց է տալիս բաղդատած առարկայի աւելի կամ պակաս որպիսութիւնը: — Աւելի մեծ, աւելի փոքր, աւելի թեթև, կամ՝ մեծագոյն, փոքրագոյն, բարձրագոյն:

Գերագրական աստիճանը որպիսութեան գերագանց գրութիւնն է ցոյց տալիս: — Ամենամեծ, ամենածանր, կամ՝ ամէնից մեծ, ամէնից ծանր, երեմն էլ շատ, անշատ, անապին բառերի օգնութեամբ՝ շատ զօրաւոր, անչափ մեծ, սաստիկ դժուարին:

Գերագրական է և բարձրական ածականը, որ միայն Աստուծուն է սեպհական:

§ 81. Յարաբերական ածականները համեմատութեան աստիճանները չ'ունին. նոքա իրանք ծագում են ուրիշ բառերից և ցոյց են տալիս զլիսւրապիս նիւթի, տեղի, ցեղի և ժամանակի յարաբերութիւնը: — Մսեղէն, երկնալին, հայկեան, առաւտեան:

152. Վերևի (150) վարժութեան բոլոր որակական ածականները բարձրացըէք բազգատական և ազատ գերագրական աստիճանի:

153. Նախընթաց (151) վարժութեան մէջ եղած յարաբերական ածականները չոքս կարգ բաժանեցէք՝ երանց նշանակութեան համեմատ, և իմացէք թէ ինչ բառերից են շնուած:

154. Հետեւեալ նախադատութիւնների մէջ որոշեցէք որակական և յարաբերական ածականները: — Գարնանային անուշ եղանակն անցաւ. եկան ամարակին տօթօրերը: Աշնանային յօրք անձրենները դադարեցան: Երե-

կոյեան մեղմ գեփիւոք գովութեմ էր տարածում: Առաւոտեան թարմ օդը լիքն է անուշահոտութեամբ: Անձը և ային օթերը գելացիք ցաքանում են փափոկ տեղը: Փոթորկալի ծովը կատաղի ալիքներ ունէր: Ծովալին փոթորեկը քանի գնաց՝ սաստիացաւ: Ծաղկաւէտ դաշտերում արածում են ընտանի կենդանիները: Դաշտային ծաղկիներեց գելացիք համեստ օրիորդները իրանց համար գեղեցիկ փոնջեր կապեցին: Բարի մարդիկ արժանաւոր գործեր են կատարում: Ընտանի կենդանիները լցուցանում են մարդուս առանին կարեքները:

Գ. ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆ.

Տարին ունի բաներիու ամիս: Տարուայ առաջին ամիսը յունաշարն է:

Տաներիու բառը որոշում է առարկային և ցոյց է տալիս նորա թիւը (քանի):

Առաջին բառը ցոյց է տալիս առարկայի կարգը (ո՞ր երորդ) և նոյնպէս որոշող բառ է:

Տաներիու և առաջին բառերը թուերի անուններ են:

§ 82. Այն բառերը, որոնք ցոյց են տալիս դոլական անուան թիւը և դասաւորութիւնը, կոչվում են լրական անուններ:

§ 83. Թուական անուններն երկու տեսակ են լինում, բայց առաջակայի քանի լինիլն է ցոյց տալիս՝ մէկ, երկու, երեք, չորս, հինգ և այլն. դասաւորական՝ որ առարկայի ո՞ր երորդը լինիլն է ցոյց տալիս՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ և այլն:

§ 84. Դասաւորական թուականները ծագում

են բացարձակներից՝ երրորդ մասնիկն առնելով իրանց վերայ: — Հինգերորդ, քսան՝ երրորդ, հազրիւր տասն և հինգերորդ, հազարերորդ:

Մէկ, էրես, էրես, չը՞ թուականների դասաւորականն է՝ առաջին (առաջներորդ), երկ-րորդ, եր-րորդ, չոր-րորդ:

155. Հետեւեալ բացարձակ թուականները դասաւորականի դարձրէք՝

Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, իննը, տասը, տասն և մէկ (տասնումէկ), տասներկու, տասներեք, տասնուշորս, տասնուշինգ (տասն և հինգ), տասնուլեց, տասնեւօթ, տասնեւութ, տասնեխնն, քսան, քսան և մէկ—քսանումէկ, երեսուն, երեսուն և հինգ—երեսունուհինգ, քառասուն, չիսուն, վաթսուն, եօթանասուն, ութսուն, իննսուն, հարեւր, հազար, թիւր, միջիօն:

§ 85. Բացարձակ թուական անուններին՝ երրորդ մասնիկի փոխանակ, ական մասնիկն աւելացնելով՝ ստանում ենք բայց լինական անունները, որոնք ցոյց են տալիս թէ գոյական անունը քանի անգամ է վեր առած: Մէկ, էրես, էրես, չը՞ բացարձակները ական մասնիկ չեն առնում. նոցա բաշխականն է՝ մէկ—մէկ, երկ—երկու, երեք—երեք, չորս—չորս: Միւս բացարձակ թուականները բացի կրկնաւոր բաշխականներից (հինգ—հինգ, վեց—վեց) առնում են վերոյիշեալ ական մասնիկը. հնգական, վեցական, եօթնական, քսանական, հազարական:

156. Կարգով գրեցիք բոլոր բացարձակ թուական անունները և նոցա հանդէպ բաշխականները:

§ 86. Գասաւորական թուականներին եթէ աւելացնում ենք ական մասնիկը, ստանում ենք մասնական թուականները, որոնք գոյական անուան մասներ կամ կոտորակներն են ցոյց տալիս:—՞ո՞ւ, ժողովրդ, երրորդական, հինգերորդական, հարիւր երորդական...

§ 87. Բացարձակ թուականներին աւելացնելով նոյ մասնիկը՝ կ'ստանանք արժէք և չափ ցոյց տուող թուական անուններ.—մէկնոց կամ մէկանոց, երկուսնոց, երեքնոց, չորսնոց, հինգանոց, վեցանոց—վեցնոց...

157. Հետեւալ թուական անուններն լսանց նշանակութեանն ու կազմութեանը նայերով՝ գանագան կարգերի բաժանեցէք:—Մէկ, կէս, առաջին, քառորդ, երկու, երեք, երկսորդ, երկուսնոց, երեքնոց, չորս, չորսորդ, չորսորդական, հինգ, հինգերորդ, հինգերորդական, վեցնոց, վեցերորդական, վեց, վեցերորդ, եօթներորդ, եօթը, եօթանոց, եօթներորդական, ութ, ութերորդական, ութնոց, ութերորդ, ինն, իննական, իններորդական, երկ—երկու, մէկ մէկ, հիննական, չորս—չորս, տասնական, տասներորդական, տասնանոց, քսան, քսանական, քսաններորդական, քսանոց, երկու հավելք երեսուն և վեցերորդական, հազար հարիւր վաթսուն և հինգերորդ, ութհարիւր երեսուն և չորսանոց, հազար ութհարիւր ութսուն և երեք, հազար ութհարիւր ութսուն և երրորդ թուականնեն, երկու հարիւր քառասուն և չորսորդ օքը:

§ 88. Բացարձակ թուական անունները կարող են ստանալ նաև առաջ և էան մասնիկները:—Միաւոր,

տասնառորդ, հարիւրառորդ, հազարառորդ. երկուսէան, երեսէան... *)

Գ. ԴԵՐԱՆՈՒՆ.

Յովհաննէսը վերցրեց գեղեցիկ զերքը:
Նու վերցրեց այս զերքը:

Նու բառը դրուած է Յակովանէն յատուկ անուան տեղը.
այս դրուած է գեղցիկ որակական ածականի տեղը:

§ 89. Այն բառերը, որոնք դրվում են գոյական և ածական անունների տեղը և կատարում են նոցա պաշտօնը, կոչվում են դէրաննան (դեր—անուն):

§ 90. Գոյական անունների պաշտօն կատարողները կոչվում են գոյական դէրաննաններ, իսկ ածական անունների պաշտօն կատարողները—ածական դէրաննաններ:

158. Հետեւալ նախադասութիւնների մէջ գտէք գոյական և ածական դէրաննանները—կովը, ձին և շունը վլիճում էին Տիգեաց հետ, թէ տանուտէրը նորանցոց ովն աւելի է սիրում: Ի հարկէ նո ինչ աւելի է սիրում, ասաց ձին. Էս նոր արօրը և ցաքանը քաշում եմ, գաշտից նոր համար փայտ եմ բերում, և նո ինչը հեծնում է ինչ և քաջաք է գնում. առանց ինչ նո միանգամայն կրօած կը լինէր:

Խնձորենին ասաց կազմուն. «Ք պտուղներս թա-

*) Երկութեան, երեքթեան, չորեքթեան բառերը կրկնաւոր թուականի միտք ունին—երկուսն էլ, երեքն էլ, և աւելի անուոց գերանուն պիտի համարուին, քան թուական անուն:

գաւորի սեղանն են զարդարում. իսկ դու միայն խոզերե կերակուր ես: — Այնոնց իբրա գլուխն էին գովում:

§ 91. Գոյական դերանունները նախադասութեան մէջ կատարում են ենթակալի և լրացնողի պաշտօն. — Է յարգում եմ նորան:

Ա. ծական դերանունները կատարում են որոշողի պաշտօն: Այս աշակերտը վերցրեց նոր գիրքը:

159. Վերեկ վարժութեան (158) նախադասութիւնները վերլուծեցէք և ցոյց տուէք թէ գոյական դերանուններն ինչ պաշտօն են կատարել:

160. Հետեւեալ օրինակները վերլուծեցէք տրամաբարանօքէն՝ նախադասութեան անդամներով: — Այն տունը շինած է այս վարպետի ձեռքով: Սա լաւ աշակերտ է. Ես յարգում եմ այս աշակերտին: Երեկ մենք՝ բոլոր աշակերտներս, զբունելու գնացինք: Մարդու ինքը պէտք է հոգայ իւր Համար: Նոքա իրանց գործերը կարգադրեցին: Սա, դա և նա գնացին այգի: Այս, այդ և այն դրանքին այգի: Ո՞վ եկաւ: Ո՞վ մարդն եկաւ: Այնպիսի բան պիտի անէք, որ ինքներդ չկարմըէք ձեր արածի համար: Քո մատիտն էլ գեղեցիկ է, բայց իմն աւելի գեղեցիկ է: Աստուած, որ ամենիս ստեղծողն է, խնամում է աշխարհս: Դու, որ ընդունակութիւն ունիս, այտք է աշխատես: Ամենայն ոք մտաւ իւր տուն:

ա. Ես գնում եմ ուսումնարան, դու էլ եկ այնտեղ և թող ինչը միայն տանը մնայ:

բ. Սա, դա և այս զիտէին իրանց դասերը, իսկ այս, այդ և այն մանուկները չ'զիտէին:

գ. Թող նա վերցնէ ին, դու և իւր գըքերը,

դ. Ո՞վ է նա և ի՞նչ է կամենում: Ո՞ր տղայի մասին է ձեր խօսքը:

ե. Այն աշակերտը, որ դասատանն անուշաղիք է, յառաջաղէմ չ'կարող լինել:

զ. Ու ո՞չ չ'գիտէ, թէ վաղը ինչ պիտի սպասահի ամէնտի:

§ 92. Դերանունները՝ իրանց մասնաւոր նշանակութեանը նայելով, վեց տեսակ են լինում:

ա. Էտիան կամ անչոսկան դերանուններ, որոնք դրվում են խօսող անձների տեղը՝ և, ու, ին. Բնի, դու, իրան:

բ. Յուրացիան դերանուններ, որոնց մատնացոյց է անում խօսողը, որպէս իւր խօսակցութեան նիւթեղողների՝ սա, դա, առա, դուքս, նոքո: Այս, այդ, այն, այն, դույն, նոյն:

գ. Սորոցիան դերանուններ, որոնք ցոյց են տալիս, թէ առարկան ում է պատկանում, ում ստացուածքն է՝ իմ, քո, իւր, զեր, իրան:

դ. Հորցական դերանուններ. ո՞վ, ի՞նչ, ո՞ր:

ե. Յարաբէրական դերանուն, որ գլխաւոր նախադասութեան մօտ բերում է մի երկրորդական որոշող կամ բացալայտիչ նախադասութիւն՝ — որ:

զ. Անորոշ դերանուններ, որոնք ընդհանուր ձեռք դրվում են գոյական և ածական անունների տեղը՝ ոչոչ, ի՞նչ, ոչի՞նչ, ամենուը, մես...

161. Հետեւեալ նախադասութիւններից՝ վերոյիշեալ բաժանման համաձայն, արտագրեցէք նշանակեալ դերանունները:

Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վերայ: Խոչ ես խըթինջում, իմ ձի եռանդուն: Ո՞ր է հայաստան աշխարհը:

Ո՞րպեսէ անձն էր Տիգրան Եղուանդեանը: Ի՞նչ է՞նչ վոյթ, թէ դուք նեղութիւն ունիք: Ես գիտեմ, որ մէս ամառը ամարանոց ենք գնալու: Ասմա դու ինչ, ոստդ վարդի: Դուք էք երկրի աղը, ասաց Յիսուսը իւր աշակերտներին: Ի՞նչ է ստեղծողը, ի՞նչ էլ կը խնամէ: Ի՞նչ եղան իրաց թշուառովթեան պատճառը: Ո՞ւ է աս, որ քամին էլ, ծովն էլ հնագանդում են սորոն: Ես ի՞նչ է թագաւոր փառաց: Դու է Աստուծոյ գառը, որ աշխարհիս մեղքը ավտի բառնայ: Այս այն Յովհանէսն է, որի գլուխը կարել տուեց Հերովդէսը: Այստեղ մարդիկ այն եկեղեցում չեն տեղաւորուիլ: Ես այդպէս փառաւոր հանդէս չեմ տեսած: Ճշմարիտ որթը եմ եմ, իսկ ի՞ս հայրը մշակ է: Տէր, ողոքութեամբք պահպանիր մէու: Մէր հայր, որ երկնքումն ես, սուրբ լինի անունը: Այս գետը, ուս բղևում է Գեղամայ լճեց, կոչվում է Հրազդան: Ու ու չե կամենում իւր պարտքը կատարել: Այս ձեռնարկութիւթիւնից մէս ունչ օգուտ չ'ստացանք: Դուրսը ու մէն կայ կանզնած: Ուս այս է ասում, այս այն: Ունաս կարծում են, թէ արեգակը սկսուում է երկրի շուրջը: Ի՞րանչէն իւր մարդ հանգստանում էր եւ ծառի հովանիկ տակ: Մէկ մարդ ժիշտին խրատում էր, որ իւր յոյսը ուրիշների օգնութեանը չ'գնէ:

Ե. ԲԱՅ.

ա. Աշակերտը գրում է, ի՞սուսն է, ո՞ւսում է:

բ. Աշակերտը յագնում է, հանգստանում է, ժնում է:

գ. Աշակերտը ոստդվում է, սիրում է, ոստդեստրում է:

բոլոր ստորոգեալները ցոյց են տալիս աշակերտի գործողութիւնը: Առաջնն տողի ստորոգեալները ցոյց են տալիս մանկան հապարած գործողութիւնը, երկրորդ տողի ստորոգեալները ցոյց են տալիս նորա ուրեշներեց իրած գործողութիւնը, եսկ երկրորդ տողի ստորոգեալները ցոյց են տալիս նորա ուրաւելնեց:

Բայց նա կարող է յօդ առնել և հոլովուիլ իբրև գոյական. ձայնաւորով վերջացածները կրկին յօդ են առնում.—իմ—իմը. քո—քոն. նորա—նորանը...

Հայոցէն հոլովը միշտ ուշականին է նման, եթէ անշունչ առարկայի տեղ է դրուած. իսկ եթէ դըրուածէ շնչաւորի տեղ, ապա նման է սպասական:

ա. Իմ գիրքը.—իմը, իմի, իմին, իմիցը, իմովը, իմումը:

*.) Ստացական դերանունները աշխարհաբար լեզուի մէջ խոկազէս առանձին դասակարգ չեն կազմում: սոքա միւս դերանունների սեռականն են, որ գոյական անունների սեռականի պէս կը կնակի յօդ են առնում և հոլովփում: օրինակ՝ Կարապետի գիրքը.—կարապետինը, կարապետինից, կարապետինով...

Իմ գրքերը.—իմոնքը, իմոնցը, իմոնցից, իմոնցով, իմոնցում:

Բ. Մեր գիրքը.—մերը, մերի, մերին, մերիցը, մերովը, մերումը:

Սեր գրքերը.—մերոնքը, մերոնց, մերոնցը, մերոնցից, մերոնցով, մերոնցում:

Ալսպէս հոլովկում են՝ քոնը, նորանը, սորանը, սորանցը և այլն:

Դերանուանական յօդեր:

§ 173. Դերանունների արմատական տառերը՝ ս, ո, ն, գրփում են գոլական անունների վերայ և որոշում են նոցա դէմքը, ուստի և կոչվում են դէմրաց կամ դէմրանանական յօդեր:

ս, ո, ն տառերը հոլովական բառերի վերայ գրուելով, միևնուն նշանակութիւնն են տալիս նոցա, ինչ նշանակութիւն պիտի տալին անձնական և ցուցական դերանունները.

Հայրս=ես հայրս, իմ հայրս, սա հայրս, սոյն հայրս:

Սալրդ=

Քոլրը(ն)=

Տունս=

Գիրք=

Եկեղեցին=

միջեր իութան Անորոշ դերանուն:

§ 174. Անորոշ դերանունները լինում են՝
ա. Գոյական՝ ոմն, ոք, ոքմին, ոչոք, ոչինչ,
իրար, միմեանց, մէկզմէկ, ամէնքը, ամենեքեան:

Բ. Ածական՝ քանի, միքանի, որքան, ալսինչ,
այնինչ, այսքան, նոյնքան:

Գ. Ածական և գոյական՝ միւս—միւսը, մէկէլ—մէ-
կէլը, ուրիշ—ուրիշը, իւրաքանչիւր—իւրաքանչիւ-
րը, ամէն—ը, ամէնմէկ—ը, միւնոյն—ը, բոլոր—ը:

Դ. Ածական և անհորնելի՝ որ և իցէ, որպիսի և
իցէ, որքան և իցէ, ինչ և իցէ, ինչ ինչ, որպիսի,
այնպիսի...

§ 175. Գոյական դերանուններից ոմն, ոք, ոչինչ-
ինչ, բոլորնեկան չեն հոլովփում:

Իրար, Ֆէլլէն, Ֆէտայ հայցական հոլով են, ուղ-
ղական չունին. սեռականը կազմփում է հայցականից
առաջին երկուսին ու կցելով իսկ երբորդը անփո-
փոխ:

Հայց. մէկզմէկ, իրար, միմեանց պատժեցին:

Սէկզմէկու, իրարու, միմեանց տուն քան-
դեցին:

Տլա՛. Մէկզմէկու, իրարու, միմեանց ընծաներ
տուին:

Բայց. Մէկզմէկուց, իրարից, միմեանցից բո-
ղոքեցին:

Գործ. Մէկզմէկով, իրարով, միմեանցով գցեցին
յանցանքը:

§ 176. Ուժի, աման հոլովում են հետեալ
կերպով.

Ուշ. Հ.	ոքմին	Ուշ.	ոմանք
Սէւ և Տ.	ոքմնի	Ո. Տ.	ոմանց
Բայ:	ոքմնից	Բայ:	ոմանցից
Գործ.	ոքմնով	Գործ.	ոմանցով
Նէրդ.	ոքմնում	Նէրդ.	ոմանցում

§ 177. Մնացած բոլոր անորոշ գերանունները կարող են յօդ առնել և գոյական անուան պէս
հոլովուիլ առաջին կանոնաւոր հոլովման տակ:

Հոլովեցէք	Ժ. Նոյնքան, նոյնքանի.
ա. Ոչոք, ոչոքի.	Ժա. Բոլորը, բոլորի.
բ. Ոչինչ, ոչինչ.	Ժբ. Միւս, միւսի.
գ. Ամէնը, ամէնի.	Ժգ. Մէկէւ, մէկէւի.
դ. Ամէնքը, ամէնքի.	Ժդ. Ուրեւ, ուրեւի.
ե. Քանիսը, քանիսի.	Ժե. Խըաքանչխւր, խըա-
փ. Մէ քանիսը, մէ քանիսի.	քանչխւրի.
է. Այսինչ, այսինչի.	Ժզ. Ամէն մէկը, ամէն մէ-
ը. Այսքան, այսքանի.	կը . . .
թ. Այսչափ, այսչափի.	

Հայի փոփոխութիւնը:

§ 178. Բայի փոփոխութիւնը եղանակներով,
ժամանակներով, թուերով և դէմքերով՝ կոչվում է
լուսարհուն:

ա. Ոիբել, սիբում եմ, կը սիբէճ, սիբէշի, սիբէ՛ր:
բ. Կարդալ, կարդում եմ, կը կարդաճ, կարդաշի, կարդա՛ր:

գ. Խօսիլ, խօսում եմ, կը խօսէճ, խօսեցայ, խօսէ՛:
դ. Ուրախանալ, ուրախանում եմ, կը ուրախանաճ, ուրախացայ,
ուրախանէ՛ր:

§ 179. Բոլոր բայէրը միատեսակ չեն խո-
նարհում, այլ շատ կամ սակաւ տարբերվում են
իրարից:

Բոլոր միատեսակ խոնարհուող բայէրը առան-
ձին կարգ են կազմում և կոչվում են չժորդութիւն *:

§ 180. Բայերն ունին չորս լծորդութիւն:

Առաջին լծորդութիւնը կազմում են այն բայ-
էրը, որոնք եւ կերջաւորութիւն ունին: — Սիրել,
գրել, գործել...

Երրրրր լծորդութիւնը կազմում են այն բայ-
էրը, որոնք եւ կերջաւորութիւն ունին: — Խօսիլ,
ասիլ, լոգնիլ...

Աշխարհացած բայէրը կազմում են երրրր լծոր-
դութիւնը: — Կարդալ, խնդալ, հաւատալ...

Անուշ վերջացած բայէրը կազմում են չըրրր
լծորդութիւնը: — Ուրախանալ, զարմանալ, բարձրա-
նալ...

Հական բայէրի խոնարհումը:

— Եմ, լինիմ —

§ 181. Զեղոք բայէրից երկուսը ցոյց են տա-

*) Լծորդութիւն նշանակում է կատակցութիւն, լծել և
լծորդել բառերից:

լիս ոչ թէ առարկայի գործողութիւնը, այլ իսկապէս նորա գոյութիւնը, էութիւնը. սոքա կոչվում են հական բայեր: Հական բայերը միևնույն ժամանակ օժանդակ են. նոցա օժանդակութեամբ է կազմվում բայերի ժամանակների մեծագոյն մասը:

Դրանք էական բայերն ունին առանձին խոնարհումն:

Ե՞ բայը միայն երկու ժամանակ ունի՝ սահմանականի աշխատանք և անհապաղը.

Նէրից՝ եմ, ես, է. ենք, էք, են:

Անշատար՝ էի, էիր, էր. էինք, էիք, էին:

Բ. Լինի բայը բոլոր ժամանակներն ունի.

Սահմանական էշանուն՝
Ներից՝ լինում եմ, լինում ես, լինում էր,
լինում ենք, լինում էք, լինում են.

Անհատար՝ լինում էի, լինում էիր, լինում էր.
լինում էինք, լինում էիք, լինում էին:

Կապարեալ եղալ, եղար, եղաւ,
եղանք, եղաք, եղան: *

Վաշանուար. եղել եմ, եղել ես, եղել է.
եղել ենք, եղել էք, եղել են:

Աղաւանի՝ կը լինիմ, կը լինիս, կը լինի.
կը լինինք, կը լինիք, կը լինին:

* Կատարեալը և նորան նման ժամանակները իսկապէս կըն - հայերէնի եղանիք բայեց են առնուած:

Պայման. աղ. կը լինէի, կը լինէիր, կը լինէր.
կը լինէինք, կը լինէիք, կը լինէին:
Հրամայական էշանուն՝ եղիք, եղէք:
Սպորտասահման էշանուն՝ որ, թէ, եթէ
Աղաւանի՝ լինիմ, լինիս, լինի:
լինինք, լինիք, լինին:
Անհատար՝ լինէի, լինէիր, լինէր.
լինէինք, լինէիք, լինէին:
Դերբայ՝ անորոշ՝ լինիլ. նէրից՝ եղող. անցեալ՝
եղել-եղած, աղաւանի՝ լինելու:

Առաջին լծորդութիւն:

§ 182. Զորս լծորդութեան բայերը տարբեր գում են իրարից անորոշ դերիցայի, անցեալ հապարեալներ, հրամայականներ և անցեալ դերիցայի կազմութեամբ:

Մասցած ժամանակները բոլոր լծորդութիւնների մէջ շինվում են միապէս և նման են միմեանց:

§ 183. Առաջին լծորդութեան անցեալ կատարեալը կազմվում է անորոշ դերբայի վերջաւորութեան փոխարէն գնելով էյի մասնիկը, հրամայականը — իր, է, անցեալ դերբայը — էլ — ած:
Ահաւասիկ առաջին լծորդութեան ամբողջ պատկերը.

Սահմանական էշանուն՝
Ներից՝ գը-ում եմ, գը-ում ես, գը-ում է.
գըում ենք, գըում էք, գըում են:

Անհամ. գը-ում էի, գը-ում էիր, գըում էր.
գըում էինք, գըում էիք, գըում էին:
Կապար. գը-եցի, գըեցիր, գըեց.
գըեցնս, գըեցն, գըեցն:
Վաղակ. գըել եմ, գըել ես, գըել է.
գըել ենք, գըել էք, գըել են:
Գեղակ. գըել էի, գըել էիր, գըել էր.
գըել էինք, գըել էիք, գըել էին:
Աղամ. կը գըեմ, կը գըես, կը գըէ.
կը գըենք, կը գըէք, կը գըեն.
Պայ. աղ. կը գըէի, կը գըէիր, կը գըէր.
կը գըէինք, կը գըէիք, կը գըէին:
Հրամայական՝ գըէր (է'). գըեցէք:
Սարդարական՝ որ, թէ, եթէ
Աղամանի՝ գը-եմ, գը-ես, գըէ.
գը-ենք, գը-էք, գըեն:
Ո. աշամ. գը-եի, գը-էիր, գըէր.
գըէինք, գըէիք, գըէին:
Դերբայ. գըել, գըող, գըել—գըած, գըելու:
215. Ուշագրութեամբ քննեցէք խոնարհած բայրը
և բացադրեցէք ժամանակների կազմութիւնը.
216. Սոյն օրինակով խոնարհեցէք հետեւեալ չէ-
դոք բայերը՝ վագել, քալել, սպասել, պարապել.
217. Գրեցէք հետեւեալ ներգործական բայերի
անցեալ կատարեալը, ապամեն, անցեալ գերբայը, հը-
ռամայականը.—Հանել, կանչել, գովել, ուզել, բռնել, ժո-
ղովել, ազատել, փոկել, սպանել, դատարկել, արձակել,
կապել, բենել, համարել—թուել:

Երկրորդ լծորդութիւն:
§ 184. Երկրորդ լծորդութեան տակն են իւ-
վերջացած բոլոր ներգործական և չկզոք բայերը:
Երկրորդ լծորդութեան անցեալ կատարեալը
վերջաւորվում է էցայ. մնացած ժամանակների կազ-
մութիւնը առաջին լծորդութեան պէս է:
Սահմանական եղանակ՝
Նէրկայ. նստում եմ, նստում ես, նստում է.
նստում ենք, նստում էք, նստում են:
Արկադակ. նստում էի, նստում էիր, նստում էր:
նստում էինք, նստում էիք, նստում էին:
Կապարէակ՝ նստէցայ, նստէցար, նստէցան.
նստէցանց, նստէցան, նստէցան:
Վաղական. նստել եմ, նստել ես, նստել է.
նստել ենք, նստել էք, նստել են:
Գեղական. նստել էի, նստել էիր, նստել էր.
նստել էինք, նստել էիք, նստել էին:
Աղամանի՝ կը նստիմ, կը նստիս, կը նստի,
կը նստինք, կը նստիք, կը նստին:
Պայ. աղ. կը նստէի, կը նստէիր, կը նստէր.
կը նստէինք, կը նստէիք, կը նստէին:
Հրամայական՝ նստիր (է'). նստեցէք:
Սարդարական՝ որ, թէ, եթէ
Աղամանի՝ նստիմ, նստիս, նստին.
նստինք, նստիք, նստին (նստեմ. նստենք):
Ո. աշամ. նստէի, նստէիր, նստէր.
նստէինք, նստէիք, նստէին:

Դերբայ՝ նստիլ, նստող, նստել — նստած, նստելու:

§ 185. Երկրորդ լծորդութեան բայերը խո-
նարհվում են նաև առաջին լծորդութեան բայերի
պէս:

218. Հետեւեալ ներգործական բայերը խոնարհե-
ցէք երկրորդ լծորդութեան տակ համարկված, ուղարկեալ:

219. Համեմատեցէք երկրորդ լծորդութիւնը ա-
ռաջին լծորդութեան հետ և բացադրեցէք նոցա նմա-
նութիւնն ու տարբերութիւնը:

220. Խոնարհեցէք հետեւեալ բայերը կատարեալ,
յարակատար, գերակատար և ստորագասականի բոլոր
ժամանակներով: — Խօսիլ, ապրել, աշխատիլ, կանգնել,
բնակել, պառկել, յոգնել, սովորել, ծաղկել, քրտնել,
յաջողել . . .

221. Խոնարհեցէք և վերջացած հետեւեալ չեզոք
բայերը առաջին լծորդութեան պէս՝ կարմըել, սպիտակել,
պատահել, ցաւել, դադարել, հաւանել, պարապել . . .

222. Գոէք ձեր ընթերցանութեան դասի մէջ ա-
ռաջին և երկրորդ լծորդութեան բայերը և իմացէք
նոցա սեռը, եղանակը, ժամանակը, թիւը և դէմքը:

Երրորդ լծորդութիւն:

§ 186. Երրորդ լծորդութիւնը կազմում են ու
վերջացած բայերը: Այս լծորդութեան անցեալ կա-
տարեալը լինում է այի, հրամայականը — անցեալ
գերբայը — այի, այս: Մնացած ժամանակների կազ-
մութիւնը նախընթացների պէս:

Տաճ Սահմանադրութեան եղանակի ամայնաւորական առ միջնադար

Ներդայ՝ կարդում եմ, կարդում ես, կարդում է.

կարդում ենք, կարդում եք, կարդում են:

Անհատութեան՝ կարդում էի, կարդում էիր, կարդում էր.

կարդում էինք, կարդում էիք, կարդում էին:

Կապահեալ՝ կարդայի, կարդայիր, կարդայ.

կարդայինք, կարդայիք, կարդային:

Վաշուկապ. կարդայի եմ, կարդայի ես, կարդայի է.

կարդայի ենք, կարդայի էք, կարդայի են:

Գերակապ. կարդացել էի, կարդացել էիր, կարդացել էր.

կարդացել էինք, կարդացել էիք, կար-
դացել էին:

Ապահանի՝ կը կարդամ, կը կարդա, կը կարդայ.

կը կարդանք, կը կարդաս, կը կարդան:

Պայմ. աղ. կը կարդալի, կը կարդալիր, կը կարդար.

կը կարդալինք, կը կարդալիք, կը կարդալին:

Հրամայական՝ կարդա. կարդացէք:

Սպարադաստին՝ որ, թէ, եթէ

Ապահանի՝ կարդամ, կարդաս, կարդալ.

կարդանք, կարդաք, կարդան:

Անհատութեան՝ կարդալի, կարդալիր, կարդար.

կարդալինք, կարդալիք, կարդալին:

Գերբայ՝ կարդալ, կարդացող, կարդացել — ցած, կար-

դալու:

223. Համեմատեցէք երրորդ լծորդութեան գեր-

բայը, կատարեալը, վարակատարն ու գերակատարը

նախընթաց լծորդութեանց հետ, — հրամայականն, ա-

պառնին ու ստորադասականը երկրորդ լծորդութեան
հետ:

224. Խոնարհեցէք ներգործական բայերս՝ աղաւ,
զգաւ, հաւատաւ, ողբաւ, մուրաւ . . .

225. Գրեցէք անցեալ գերբայը, վազակատարը և
գերակատարը հետեւեալ չէզոք բայերի՝ մնաւ, գնաւ,
գոռաւ, յուսաւ:

226. Գրեցէք սահմանական ապառնի և ստորա-
դասական ապառնի ժամանակներով հետեւեալ չէզոք
բայերը՝ խղճաւ, հազաւ, անսաւ:

227. Գրեցէք բոլոր եղանակներով և ժամանակ-
ներով հետեւեալ բայերը՝ ջանաւ, խնդաւ, խազաւ . . .

Չորրորդ լծորդութիւն:

§ 187. Չորրորդ լծորդութիւնը կազմում են
անուշ վերջացած բայերը:

Չորրորդ լծորդութեան անցեալ կատարեալը
վերջաւորփում է այս, հրամայականը ային, անցեալ
գերբայը այեւ—այսծ:

Սահմանական եղանակնի

Ներկայ՝ իմանում եմ, իմանում ես, իմանում է.
իմանում ենք, իմանում էք, իմանում են:

Անշաբար՝ իմանում էի, իմանում էիր, իմանում էր.
իմանում էինք, իմանում էիք, իմանում էին:

Կարուեալ՝ իմացալ, իմացար, իմացաւ.
իմացանք, իմացաք, իմացան:

Վաշարկառ. իմացել եմ, իմացել ես, իմացել է.
իմացել ենք, իմացել էք, իմացել են:

Գերակառ. իմացել էի, իմացել էիր, իմացել էր.

իմացել էինք, իմացել էիք, իմացել էին:

Աղաւան. կ' իմանամ, կ' իմանաս, կ' իմանայ.

կ' իմանանք, կ' իմանաք, կ' իմանան:

Պայ. աղ. կ' իմանալի, կ' իմանալիր, կ' իմանար.

կ' իմանալինք, կ' իմանալիք, կ' իմանալին:

Հրամայական եղանակնի իմայիլ, իմայէ՛ս:

Սպրբութասական եղանակնի որ, թէ, եթէ

Աղաւան. իմանամ, իմանաս, իմանայ.

իմանանք, իմանաք, իմանան:

Անշաբար. իմանալի, իմանալիր, իմանար.

իմանալինք, իմանալիք, իմանալին:

Դերբայ՝ իմանալ, իմացող, իմացել—ցած, իմա-
նալու:

228. Համեմատեցէք չորրորդ լծորդութեան կա-
տարեալը, հրամայականը և անցեալ գերբայը երկրորդ
լծորդութեան նոյն ժամանակները հետ:

229. Բոլոր չորս լծորդութիւնը համեմատեցէք մե-
ծեանց հետ և բացարկեցէք, թէ որ ժամանակներումն
են տարբերվում լրացը:

230. Բացարկեցէք սահմանականի պարզ ապառ-
նին և աղաւ, ապառնին կազմութիւնը և նոցա տարբե-
րութիւնը ստորադասական ապառնից և անկատարեց
բոլոր լծորդութիւնները մէջ:

231. Խոնարհեցէք վայեւ և վեհանու բայերը համե-
մատական կերպով, զուգընթացաբար:

232. Սահմանական եղանակի բոլոր ժամանակնե-
րով խոնարհեցէք հետեւեալ ներգործական բայերը՝ մո-

ուանալ, խոստանալ, գիտենալ, գողանալ, ընթեռնուլ
ընթեցայ (>):

233. Խոնարհեցէք մնացած եղանակներով շետե-
ւեալ չեզոք բայերը՝ ուրախանալ, զարմանալ, բարձրա-
նալ, մեծանալ, փոքրանալ, հարստանալ . . .

Արաւորական բայերի խոնարհումը:

§ 188. Կրաւորական բայերը ծագում են ներ-
գործական բայերից՝ անցեալ դերայի առաջին վեր-
ջաւորութիւնը անխտիր ռ-իլ դարձնելով, օրինակ.

Լ. Ճորդ.	Ներդ.	Դերբայ	Կրաւոր.
ա.	սիրել,	սիրել—	սիր-ուիլ.
բ.	հաւանիլ,	հաւանել	հաւան-ուիլ.
գ.	կարդալ,	կարդացել	կարդաց-ուիլ.
դ.	մոռանալ,	մոռացել	մոռաց-ուիլ.

§ 189. Ամենայն բայ, որի վերջաւորութիւնը
կարելի չ' լինի սոյն ձեռք փոփոխել, չեզոք է. փո-
փոխուողները ներգործական են:

§ 190. Անորոշ դերբայը ալսպէս կազմելուց
լետոյ՝ բոլոր կրաւորական բայերը խոնարհելու է
երկրորդ լծորդութեան տակ:

*) Մեակ բայն է, որ պահճել է գրաբարի ռ-լ վերջաւորու-
թիւնը, եթէ չ' լիշենք մի քանի բայեր ևս, որոնք գործածական չեն
զգենուլ, թողուլ (զգենալ, թողել կամ թողնել):

Սահմանական էլանին վերջաւորութիւնը 482

Ներդոյ՝	սիրվում եմ, հաւանվում եմ, կարդացվում եմ, մոռացվում եմ:
Անհապար՝	սիրվում էի, հաւանվում էի, կարդացվում էի, մոռացվում էի:
Կապարեալ՝	սիրուեցալ, հաւանուեցալ, կարդացուեցալ, մոռացուեցալ: *
Վաշուիտար.	սիրուել եմ, հաւանուել եմ, կարդացուել եմ, մոռացուել եմ:
Գերայտար.	սիրուել էի, հաւանուել էի, կարդացուել էի, մոռացուել էի:
Ապառանի՝	կը սիրուիմ, կը հաւանուիմ, կը կարդացուիմ, կը մոռացուիմ:
Պայ. առ.	կը սիրուէի, կը հաւանուէի, կը կարդացուէի, կը մոռացուէի:
Հրահայուկ.	սիրուիր (է), հաւանուիր, կարդացուիր, մոռացուիր:

Սարսարասահան՝ որ,	թէ, եթէ
Ապառանի՝	սիրուիմ, հաւանուիմ, կարդացուիմ, մոռացուիմ:
Անհապար՝	սիրուէի, հաւանուէի, կարդացուէի, մոռացուէի:
Գերայտար՝	սիրուիլ, հաւանուիլ, կարդացուիլ, մոռացուիլ:

*) Կամ առաջին լծորդութեան վերջաւորութեամբ՝ սե-
ռուեցի...

234. Խոնարհեցէք նշանակեալ բայերը բոլոր ժամանակներով:—Գրաւանք:

235. Իմացէք թէ հետևեալ բայերից որոնք են ներգործական և որոնք չէզոք:—Կարդալ, հաւատալ, գողանալ, իմանալ, մարդարէանալ, մոռանալ, լզանալ, ծնել, չափել, հոգալ, որսալ, զարժանալ, հարբել, բարկանալ, զօրանալ, թշնամանալ, ծուլանալ, գողալ, հոգալ, յուսալ, ջանալ, ցնձալ, ազդել, ազաշել, այրել, բռնել, կարել, հարամայել, մատնել, յայտնել, շարժել, շնել, շնչել, փոկել, քաջալերել, բաժանել, դարձանել, խափանել, կործանել, յանդիմանել, սերմանել, հալածել, վռնտել, հասնել, աղաղակել, ամաշել, գոշել, գիծել, սպառել, թագաւորել, տիրել, կանչել, կանաչել, մնչալ, մռնչալ, կորել, կոռել, վասել, քանդել, փորել, աղալ, ազել, չղել, քարել, տաշել, ջարդել, հալածել, մղել, փոկել, սպանել, անցնել, իշնել, ենել, հասնել, մտնել, համբերել, յուսահատուել, վհաստուել, դաւանել, խոստովանել, խորչել, կամենալ, նայել, ջանալ, բանալ, աշխատել, բնակել, դադարել, հրաժարել, պակասել, արգելել, արձակել, գիզել, կարկառել, գործել, գտնուել:

236. Վերոյլշեալ բայերից ներգործականները գրեցէք կրաւորականի վերջաւորութեամբ:

Անկանոն խոնարհմունք:

§ 191. Այն բայերը, որոնց սահմանականի կատարեալը, հրաժարականը և անցեալ գերբայը մեր սովորած խոնարհումից շեղվում են, կոչում են անկանոն բայեր: Անկանոն բայերը երկու կարգի են բաժանվում՝ կէս զարտուղիք և բուն զարտուղիք:

§ 192. Կէս զարտուղիք են բոլոր նէլ նիշնոց վերջաւորութեամբ բայեր, որոնք խոնարհում են չորրորդ լծորդութեան պէս, բայց անկանոն ժամանակներումը ն տառը փոխանակ ցի փոխելու՝ իբրև եկամուտ տառ, դուրս են ձգում:—Կրաւորականը կանոնաւոր է և ն տառը պահում է: Անյանանի սահմանական 0րինակներ՝ այսպիս մուտքածութեամբ . 0.8. Անյանանի սահմանական 0րինակներ՝ այսպիս մուտքածութեամբ . 0.8.

Գտնել, գտայ, գտիք, գտել՝ գտած:
Տեսնել, տեսայ, տես, տեսել՝ տեսած:
Մտնել, մտայ, մտիք, մտել՝ մտած:
Լինել, եղայ, եղիք, եղել՝ եղած:
Դառնալ, դարձայ, դարձիք, դարձել՝ դարձած:
Դառնալ, դառայ, դառ, դառել՝ դառած:
Հեծնել, հեծայ, հեծիք, հեծել՝ հեծած:
Իջնել, իջայ, իջիք, իջել՝ իջած:
Խածնել, խածայ, խածիք, խածել՝ խածած:
Հասնել, հասայ, հասիք, հասել՝ հասած (Հասունանալ):
Հասնել, հասայ, հասիք, հասել՝ հասած (Հասանել):
Բուսնիլ, բուսայ, բուսիք, բուսել՝ բուսած:
Անցնել, անցայ, անցիք, անցել՝ անցած:
Հագնել, հագայ, հագիք, հագել՝ հագած:
Մեռնել, մեռայ, մեռիք, մեռել՝ մեռած:
Ծնանել, ծնայ, ծնիք, ծնել՝ ծնած:
Զբօսնիլ (ուլ) զբօսայ, զբօսիք, զբօսել՝ զբօսած
(անգործածական):
Երգուիլ, (նուլ), երգուայ, երգուիք, երգուել՝ երգուած):
Ընկնել, ընկայ, ընկիք, ընկել՝ ընկած:

236. Խոնարհեցէք ծնել, ծնողին և համեմատեցէք
ծնողին բայի հետ, որ միւնոյն ժամանակ ներգործական
է, կրաւորական և չշղոք:

237. Խոնարհեցէք դունել, ունենել, և հոգնել բայ-
երի կրաւորականը:

238. Գրաւոր ներկայացրէք վերոյիշեալ բայերի
սահմանականի, կատարեալ, վաղակատար, գերակա-
տար ժամանակները բոլոր դէմքերով:

239. Գրեցէք նոյն բայերի ապառնին և ստորա-
գասականը բոլոր դէմքերով:

§ 193. Սլապէս խոնարհվում են չել վերջա-
ցած բայերը, որոնց չ տառը ևս, եկամուտ լինե-
լով, դուրս է ձգվում:

Թռչիլ, թռայ, թռիր, թռել—թռած:

Փլչիլ, փլայ, փլիր, փլել—փլած:

Դիպչիլ, դիպայ, դիպիր, դիպել—դիպած:

Կալչիլ, կալայ, կալիր, կալել—կալած:

Կորչիլ, կորայ, կորիր, կորել—կորած:

240. Զուգընթացարար խոնարհեցէք հունել և հունել
բայերը և բացատրեցէք, թէ ինչո՞ւ առաջն բայը պա-
հում է չ տառը, իսկ երկորդը՝ ոչ:

241. Խոնարհեցէք գրաւոր՝ պաչէլ, իչէլ, իշնչէլ բայերը,
որոնց չ տառը եկամուտ չէ, այլ արժատական:

§ 194. Հետևեալ բուն զարտուղի բայերը խո-
նարհման երկու ձև ունին, որոնցից առաջինը, ան-
կանոնը, աւելի գործածական է: Սոցա կրաւորա-
կանները ևս կանոնաւոր են:

ա. Բերէլ կրաւորական բերուիլ՝

Կապորէոլ, Բերի, բերիր, բերաւ. բերինք, բե-
րիք, բերին:

Կապորէոլ. Բերեցի, բերեցիր, բերեց. բերեցինք,
բերեցիք, բերեցին:

Բեր, բերէք, բերեցէք. բերած—բերել:
բ. Անէլ—անուիլ՝

Ասիր, ասիր, ասաւ. ասինք, ասիք, ասին:

Ասացի, ասացիր, ասաց. ասացինք, ասացիք.
ասացին:

Ասա, ասիր, ասէք, ասացէք. ասած—ասել:

գ. Անէլ—անուիլ կամ արուիլ:

Արի, արիր, արաւ. արինք, արիք, արին:

Արեցի, արեցիր, արեց. արեցինք, արեցիք,
արեցին:

Արա, արէք, արեցէք. արել—արած:

դ. Դնէլ—դնուիլ կամ դրուիլ:

Դրի, դրիր, դրաւ. դրինք, դրիք, դրին:

Դրեցի, դրեցիր, դրեց. դրեցինք, դրեցիք, դրեցին:

Դիր, դիրէք, դրեցէք. դրել—դրած:

ե. Աննէլ—աննուիլ (գնել):

Առայ, առար, առաւ. առանք, առաք, առան:

ԱՌ, առէք, առել—առած:

զ. Տանէլ—տանուիլ կամ տարուիլ:

Տարայ, տարար, տարաւ. տարանք, տարաք,
տարան:

Տարի, տարիր, տարաւ. տարինք, տարիք, տարին:

Տարիք, տարիք, տարել—տարած:

է. Բանալ * — բայսուիլ:

*.) Եւրկան անգործածական է. չենք ասում բանում՝ եմ,

բացի, բացիր, բացաւ. բացինք, բացիք, բացին:
բացեցի, բացեցիր, բացեց. բացեցինք, բացե-
ցիք, բացեցին:

Բաց, բացիր, բացէք, բացեցէք. բացել — բացած:
ը. նստիլ — նստուիլ (կրաւորականակերպ չեզոք):
նստալ, նստար, նստաւ, նստանք, նստաք,
նստան:

նստեցի, նստեցիր, նստեց. նստեցինք, նստեցիք,
նստեցին:

Նիստ, նստիր, նստէք. նստել — նստած:
թ. Թռնշել — Եռնշուիլ (ա տառը եկամուտ է):
Թողի, թողիր, թողաւ, թողինք, թողիք, թողին:
թողեցի, թողեցիր, թողեց. թողեցինք, թողե-
ցիք, թողեցին:

Թող, թողէք, թողեցէք. թողել — թողած:
ժ. Երդուուլ իւմ երդուիլ (գործ է ածվում եր-
դում ուտել):
Երդուալ, երդուար, երդուաւ. երդուանք, եր-
դուաք, երդուան:

Երդուեցալ, երդուեցար, երդուեցաւ. երդուե-
ցանք, երդուեցաք, երդուեցան:

Երդուիր, երդուեցէք. երդուել — երդուած:
ժա. Սկսել — սկսուիլ:

Սկսալ, սկսար, սկսաւ. սկսանք, սկսաք, սկսան:

բանում ես, բանում է, այլ բաց եմ անում... որովհետեւ բա-
նում էմ ներդութականի ներկան է:

Սկսեցի, սկսեցիր, սկսեց. սկսեցինք, սկսեցիք,
սկսեցին:

Սկսիր, սկսէք, սկսեցէք. սկսած — ել:
Ժբ. Պրձնիլ — Պրձնուիլ (ա եկամուտ):
Պրձալ, պրձար, պրձաւ. պրձանք, պրձաք,
պրձան:

Պրձիր, պրձէք. պրձել - ած:
242. Վերոյիշեալ բայերից իւրաքանչփոք խոնար-
հեցէք բոլոր ժամանակներով (գրաւոր):

243. Ներգործականների կրաւորականները խո-
նարհեցէք բերանացի:

244. Անցեալ կատարեալ բոլոր դէմքերով նախա-
դասութիւններ գրեցէք առաջին վեց բայերի վերայ:

245. Նոյն ձևով Ցնացած բայերի վերայ:
§ 195. Երկու բայ կայ, որոնց անցեալ կա-
տարեալը ուրիշ արմատից է շինվում. ուրեմն նոքա-
գլխովին անկանոն են: Կրաւորականը կանոնաւոր է:
ա. Ուտել — ստուուիլ կամ իւրուիլ:

Կերայ, կերար, կերաւ. կերանք, կերաք, կերան:
կեր, կերէք. ուտող — կերող. կերել — կերած:

բ. Գուլ:
Եկալ, եկար, եկաւ. եկանք, եկաք, եկան:
Եկ, եկէք. եկող. եկել — եկած:

§ 196. Գուլ, լու և առաջ բայերի սահմանականի
ներկան և անկատարը ևս անկանոն են, այն է՝
փոխանակ սովորական ուժ վերջաւորութեան, ան-
որոշ գերբայի վերայ առնում են իս վերջաւորութիւ-
նը: Գալիս եմ, գալիս ես, գալիս է.

Տալ * — տալիս եմ, տալիս ես, տալիս է. տալիս ենք, տալիս էք, տալիս են:

Տուլ — տուլի, տուլիր, տուլաւ. տուլինք, տուլիք, տուլին:

Տուլ — տուլեցի, տուլեցիր, տուլեց. տուլեցինք, տուլեցիք, տուլեցին:

Տուր, տուրք, տուլեցէք. տուռղ. տուել — տուած.

Լալ * լալիս եմ, լալիս ես, լալիս է. լալիս ենք, լալիս էք, լալիս են:

Լալ — լացի, լացիր, լացաւ (եց). լացինք, լացիք, լացին:

Լաց, լացէք. լացող. լացել — ած:

246. Գրաւոր ներկայացրէք գուլ և շու բայերը բոլոր եղանակներով և ժամանակներով խոնացած:

247. Տու բայի ստորադասական անկատար և ապառնի ժամանակների զերայ նախադասութիւններ գըեցէք՝ եզակի և յոգնակի:

Գու բայի ներկայ, անցեալ և ապառնի զերսայեց նախադասութիւններ գրեցէք, այնպէս որ գերբայերը որոշողի պաշտօն կատարած լինին:

Պակասաւոր բայեր:

§ 197. Կան բայեր, որոնք բոլոր ժամանակները չունին: Գոքա կոչվում են պահապահ: Պակա-

*) Կըաւորականը լինում է տրուել կամ ռամկօրէն առլաւ և սակաւ է դործ ածվում:

*) Գործ է ածվում լու լինել:

սաւոր բայերի պակաս ժամանակները լրանում են ուրիշ բայերով: Ահաւասիկ՝

ա. Եմ էական բայը ունի միայն երկու ժամանակ՝ սահմանականի ներկան և անկատարը. էմ, էի:

բ. Կամ բայը ևս միայն երկու ժամանակ ունի՝ կամ, կայի . . .

Կամ և էմ բայերը լրանում են լինիմ էական բայով:

գ. Ունիմ, ունիս, ունի. ունինք, ունիք, ունին: Ունէի, ունէիր, ունէր. ունէինք, ունէիք, ունէին:

Լրանում է ունէնալ բայով:

դ. Կարենամ, կարենաս, կարենայ. կարենանք, կարենաք, կարենան:

Կարենալի, կարենալիր, կարենար. կարենալինք, կարենալիք, կարենալին: *

Կարացի, կարացիր, կարաց. կարացինք, կարացէք, կարացին:

Լրանում է կարացնալ բայով:

ե. Գիտեմ, գիտես, գիտէ. գիտենք, գիտէք, գիտեն:

*) Ստորադասական եղանակի ապառնի և անկատար ժամանակներն են խակապէս, որ սահմանական եղանակի ներկայ և անկատար ժամանակի տեղ են բանում:

Գիտէի, գիտէիր, գիտէր. գիտէինք, գիտէիք,
գիտէին:

Լրանում է գիտէնալ բայով:

248. Պակասաւոր բայերը խոնարհեցէք և մնա-
ցած ժամանակները իրանց լրացուցել բայերով լրացըէք:

249. Լրացուցել բայերն առանձին խոնարհեցէք:

Միադէմ բայեր:

§ 198. Կան բայեր, որոնք միայն եղակի եր-
րորդ դէմքով են գործածվում, ուստի և մոռէմ
են կոչվում: Միադէմ բայերն իսկապէս երկու մա-
սից են բաղկացած. երկրորդ մասն էական բայն է,
իսկ առաջին մասը գոյական կամ ածական անուան
միտք ունի: —Պէտք է, արժան է, հարկ է, ամօթ
է, հնար է, վայել է, հերիք է, բաւ է, անկ է... —

§ 199. Միադէմ բայի մօտ ենթական պրակտի-
կոլովով է դրվում. երբեմն միադէմ բայը գործ է
ածվում առանց ենթակայի և կազմում է առէմ
նախադասութիւն:

§ 200. Դիմաւոր բայերից ևս ոմանք գործ են
ածվում որպէս միադէմ բայեր և անդէմ նախադասու-
թիւն են կազմում: — Ասում են, կը լսուի, խօսուե-
ցաւ, մթնում է, ցրտեց...

250. Հետեւեալ նախադասութիւններում գտնէք են-
թական: — Զեզ պէտք է աճել, իսկ ինձ — մեղմանալ:
Մեղք է զրպարտել անմեղ մարդկանց: Ամօթ է, երբ
մարդ չի կատարում իւր խոսուումը: Հար: է, որ որդեքը

պատուեն իրանց ծնողներին: Քեզ արժան է գիտենալ
քո օգուտն ու վնասը: Որո՞ն հասր է, պէտքէ շրջա-
նկատութիւն պահպանել, որ թշնամին մեր մէջը չ'մըս-
նի: Հերիք է մեզ, որքան խարուեցանք, բաւ է, որքան
գաւաճանեցին մեր հաւատարմութիւնը: Ասած է, սուտ
ասողի տոնը կրակ ընկաւ, ոչ ոք չ'հաւատաց: Կը լուսի
թէ Հայերը մեծ ջանք են անում մտաւորապէս յառաջ
գնալու: Խօսուեցու ու վարուեցու, որ առաջ մենք գնանք,
յետոյ դուք:

Բացասական բայեր:

§ 201. Երբ որ բայերը գործողութեան կա-
տարումը ժխտում են, չի ասելով են մի բան կա-
տարում, կոչվում են բայուսական բայեր: — Զեմ կար-
դում, չ'խօսեցայ, չ'ուրախանամ, ֆ' գրիր:

Բացասական բայերին հակառակ, միւս բայերը
կոչվում են հասպատական:

§ 202. Բացասական բայերի խոնարհումը փոքր
ինչ տարբեր է հաստատական բայերի խոնարհումից:
Օրինակ՝ չ'լսէլ:

Սահմանական եղանակ. չեմ լսում, չես լսում, չի լսում.
Ներիշոյ՝ չեմ լսում, չես լսում, չի լսում.

Ենք լսում, չեք լսում, չեն լսում:
Անշատ. չէի լսում, չէիր լսում, չէր լսում.

Ենքնք լսում, չէիք լսում, չէին լսում:
Կապարեալ՝ չ'լսեցի, չ'լսեցիր, չ'լսեց.

չ'լսեցինք, չ'լսեցիք, չ'լսեցին:

Վաղական. չեմ լսել, չես լսել, չի լսել.
չենք լսել, չէք լսել, չեն լսել:

Գերական. չէի լսել, չէիր լսել, չէր լսել.
չէինք լսել, չէիք լսել, չէին լսել:
Աղասին. չեմ լսիլ, չս լսիլ, չի լսիլ.
չենք լսիլ, չէք լսիլ, չեն լսիլ:
Պայ. աղ. չէի լսիլ, չէիր լսիլ, չէր լսիլ.
չէինք լսիլ, չէիք լսիլ, չէին լսիլ:
Հրանցյալ. մի լսիր, մի խօսիր, մի կարդար, մի
ուրախանար:
մի լսէք, մի խօսէք, մի կարդաք, մի ու-
րախանաք:

Սպարառ. որ, թէ, եթէ

Աղասին. չլսեմ, չլսես, չլսէ.
չլսենք, չլսէք, չլսեն:

Անշտառ. չլսէի, չլսէիր, չլսէր.
չլսէինք, չլսէիք, չլսէին:

Դերբայ. չլսել, չլսող, չլսած, չլսելու:

§ 203. Սյս պատկերից երևում է՝

ա. Եական բայով կազմուած ժամանակները
չ մասնիկն ընդունում են Եական բայի վերայ և
սովորապէս նախադաս են վարվում: — Խօսում է —
չէ խօսում:

բ. Սահմանականի ապառնին շինվում է անխը-
տիր անորոշ գերբայից, միայն առաջին լծորդու-
թեան բայերի վերջաւորութիւնը ևս ի է դառ-
նում: Գրել — չեմ գըիւ գործել — չեմ գործիւ . .

գ. Պայմանական ապառնին ևս շինվում է ա-
նորոշ գերբայից Եական բայի անկատար ժամանա-

կի բացասական ձեռվ: — Կը գըէի — չէի գըիր. Կը
կարդայի — չէի կարդալ . . .

դ. Եական բայի եզակի երբորդ գէմքը — չէ —
միւս բայերի հետ կցուելիս՝ փոխվում է չէ՝ չի խօ-
սում, չի գրում, չի կարդում, չի ուրախանում. թէ
և կան և անփոփոխ գրողներ՝ չէ խօսում, չէ գրում,
չէ կարդում, չէ ուրախանում:

ե. մնացած ժամանակները իրանց վերայ առ-
նում են չ մասնիկը անխտիր:

զ. Հրամայական եղանակը չ մասնիկի փոխա-
րէն առնում է մի բացասական մասնիկը:

251. Խոնարհեցէք՝ հանել, իսնէլ, գոչէլ ներգործա-
կանները և աղասին, պարապէլ չէզոքները բացասական ձեռվ:

252. Խոնարհեցէք՝ նոյնպէս՝ աշխարհել, իսնէլ, բանիլ,
հուշանիլ, նոյն բացասական ձեռվ:

253. Խոնարհեցէք նմանապէս երբորդ լծորդու-
թեան բայերը՝ ֆառլ, գնառլ, գուառլ, իսնդառլ, ենդառլ:

254. Խոնարհեցէք չորսոսդ լծորդութեան բայերը՝
հասանալ, իսուսանալ, գախենալ, աւաբանանալ, պաբանանալ:

255. Խոնարհեցէք հետեւեալ կրաւորական բայե-
րը՝ սիրուել, կարդացուել, մոռացուել:

256. Խոնարհեցէք հետեւեալ զարտուղի բայերը՝
բուսնել, անցնել, գեպւել, կաւել . . .

§ 204. Կամ, էմ, ունիմ, գետէմ բայերի բացասակա-
նը առանձին կազմութիւն ունի՝

ա. Չկամ, չկաս, չկալ.
չկանք, չկաք, չկան:
չկայի, չկայիր, չկար.
չկայինք, չկայիք, չկային:

բ. չեմ, չես, չէ. իւած մոխտացայ մի
չենք, չէք, չեն: լարդավ ձեւ միսրաք
չէի, չէիր, չէր. մարդ մաս մարմաք . ք
չէինք, չէիք, չէին: ուշը պահաց ուժի
գ. չունիմ, չունիս, չունի. նայր մէ և ուս
չունինք, չունիք, չունին: խթիմ և մաք և
չունէի, չունէիր, չունէր. յ և նայր մէ
չունէինք, չունէիք, չունէին: ան և
դ. չգիտեմ, չգիտես, չգիտէ. մաս ու նամ
չգիտենք, չգիտէք, չգիտեն: ան և
չգիտէի, չգիտէիր, չգիտէր.
չգիտէինք, չգիտէիք, չգիտէին:

Անցողական բայեր:

ա. Կարդալ, խօսիլ, ուտել, մոռանալ
բ. Կարդ—այնել, խօս—եցնել, ուտ—ացնել,
գ. Կարդալ տալ, խօսիլ տալ, ուտել տալ,
դ. Կարդացնել տալ, խօսեցնել տալ,
մոռացնել տալ:

§ 205. Առաջին տողի բայերը ներգործական են:
Երկրորդ տողի բայերը շինուած են նոյն ներ-
գործականներից և ցոյց են տալիս, որ գործողու-
թիւնը ոչ թէ ներգործում է իւր մօտաւոր առար-
կալին անմիջապէս, այլ անցնում է նորան օտարի
ձեռքով: Այդ տեսակ բայերը կոչվում են անցողիոն:

Անցողական բայերը շինվում են ներգործական
բայերից, նոցա արմատին կցելով յշնէլ կամ յնէլ
մասնիկը և կամ է յօդակապով. *

§ 206. Անցողական բայերի տեղ կարող են
դործ ածուկի ներգործական բայերը առաջ բայի հետ:—
Կարդալ տալ, խօսիլ տալ, ուտել տալ, մոռանալ տալ:
Իսկ եթէ առաջ բայն աւելացնենք անցողական
բայերին, կրկին անցողական կ'ստանանք:—Կարդա-
ցնել տալ, խօսեցնել տալ, ուտացնել տալ, մոռացնել
տալ:

ա. Մեռնել, յոգնել, կորչել, թռչել:
բ. Մեռ—յնել, յոգ—եցնել, կոր—ցնել, թռու—ցնել:

§ 207. Յնել մասնիկը, որ ներգործական բայը
անցողական է գարձնում, չէզոք բայերի վերայ
դրուելով՝ նոցա պարզ ներգործական է զինում.
Առաջնել, յագնեցնել, իրանել, լույնել ոչ թէ ուրիշ
ձեռքով, այլ անմիջապէս:

Այս ներգործականներն անցողական անելու
համար, պէտք է մօտը գնել առաջ բայը:—Մեռցնել
տալ, լոգնեցնել տալ, կորցնել տալ, թռցնել տալ:

§ 208. Անցողական բայերը խոնարհվում են
առաջին լծորդութեան պէս, միայն կատարեալ ժա-

*) է յօդակապը սովորապէս և է լծորդութեան
բայերի համար է գործ գնվում, թէկ նոքա ևս կարող են ա
յօդակապ առնել:

մանակում շնել մասնիկի և տառը փոխվում է ր. կարդացրի, կարդացրիր, կարդացրեց... իսկ հրամայականը և տառը փոխելուց զատ՝ վերջը ո՞ւ է ունենում. կարդացրո՞ւ.

257. Հետեւեալ ներգործական բայերը անցողական շնեցէք և խոնարհեցէք:— Հաւատալ, խմել, հասնել, մոռանալ, հաւանիլ, ճանաչել, կարդալ, սովորել, ուտել . . .

258. Միւնոյն բայերը տալ բայով կը կին անցողական շնեցէք և խոնարհեցէք:—

259. Հետեւեալ չէզոք բայերը շնեցէք ներգործական և խոնարհեցէք՝ մեռնիլ, յոգնիլ, կորչիլ, խաղալ, կաչել, թռչիլ, մեծանալ, լաւանալ, հիւանդանալ:

260. Միւնոյն բայերը անցողական շնեցէք և խոնարհեցէք:

261. Հետեւեալ բայերը անցողական շնեցէք՝ չափել, ազգել, աղաչել, արել, բռնել, կարել, հրամայել, յանդիմանել, սերմել, հալածել, վռնտել:

262. Խոնարհեցէք հետեւեալ բարդ բայերը՝ ներս մտնել, գուրս գնալ, վագ տալ, վրայ տալ, որս անել, գործ ածել, հոգս քաշել, ջանք անել:

Դերբայ:

§ 209. Դերբայերը չորս են (107) ա, անորոշ գերբայ կամ աներևոյթ, բ, ներկայ գերբայ կամ ընդունելութիւն ներկայ, գ, անցեալ գերբայ, դ, ապառնի գերբայ:

§ 210. Անորոշ գերբայը վարվում է՝ ա. իբրև բայ և բ. իբրև գոյական անուն:

Նա բայ է, երբ մօտը մի ուրիշ դիմաւոր բայ ունի և նախադասութեան մէջ լրացնողի կամ ենթակալի պաշտօն չի կատարում, այլ ինքն ունենում է իրան լրացնողը կամ ենթական. ուղղում եմ գոյալ և վարժապետիցս ներողութիւն ինդրել այսինքն՝ ուղղում եմ գոյալ և վարժապետիցս ներողութիւն ինդրել:

§ 211. Անորոշ գերբայը գոյական է, երբ նախադասութեան մէջ կատարում է լրացնողի, օրոշողի և ենթակալի պաշտօն: Այդ գիպուածում նա՝ որպէս հասարակ գոյական անուն, հոլովկում է երկրորդ հոլովման պէս՝ կարդալ, կարդալու, կարդալուց, կարդալով, կարդալում:

ա. Կարդալը լաւ բան է. (ինչը)՝ ընթերցանութիւնը (ենթակալ):

բ. Կարդալը գերբս գեղեցիկ է՝ ընթերցանութեան (որոշող),

գ. Գերբը հարդարու է որոշուած՝ ընթերցանութեան (տրակ. և լրացնող):

դ. Կարդալը մարդս բաւականութիւն է ստանում՝ ընթերցանութիւնից (երկ. լրացնող):

ե. Կարդալը մենք բաւականութիւն ենք տալիս մեր հարցասիրութեանը՝ ընթերցանութեամբ (երկ. լրացնող):

զ. Կարդալը ոմանք բաւականութիւն չեն գլտնում՝ ընթերցանութիւնում (լրացնող):

§ 212. Ներկայ գերբայը գործ է ածվում իբրև բայ և իբրև ածական անուն:

իբրև բայ ներկայ գերբալը գործ է ածվում
միայն էական բայի օգնութեամբ (տես վարը): Իբ-
րև ածական անուն՝ նա միշտ դրվում է գոյականի
մօտ և պարզ ածականի պէս նորան որոշում է, հե-
տեավէս կարող է յօդ առնել և հոլովուիլ իբրև սո-
վորական ածական անուն: — Խոտ հնչչ մշակները գե-
րանդիներն առան և մտան մարգագետինը — խոտ
հնչչները գերանդիներն առան...:

§ 213. Անցեալ գերբալը երկու վերջաւորու-
թիւն ունի՝ ած և լ (երբեմն էալ): Ել վերջաւորու-
թիւնը գիմաւոր բայերից անբաժան է գործ ած-
վում, կազմելով վաղակատար և գերակատար ժա-
մանակները, ինչպէս տեսանք բայերի մէջ: Եալ վեր-
ջաւորութիւնը գրաբարի մնացորդ է և աշխարհա-
բարում գործ է ածվում որպէս հասարակ ածական՝
սիրեցեալ, մեռեալ, ննջեցեալ, հանգուցեալ (երբեմն
միայն իբրև գերբալ՝ էալ այն օրից՝ սկսած այն
օրից):

§ 214. Ած անցեալը երեք կերպ գործածու-
թիւն ունի.

ա. Նա բայ է, երբ նախադասութեան մէջ են-
թակայի, որոշողի կամ լրացնողի պաշտօն չի կա-
տարում, այլ ինքը առնում է ենթակայ կամ լրաց-
նող. — Հայոց զօրքը Տղմուտ գէտն անյած՝ պատերազմն
սկսեցին — անյան և անցին: Կէս օրից մէկ ժամ հնացած՝
մենք քաղաք հասանք — մէկ ժամ էր մնացել: Զորը
չհասած՝ ոտներդ մի հանիլ մինչեւ չես հասել:

բ. Ած անցեալը, եթէ մօտը որեկիցէ գոյական
ունի, որին որոշում է, ածական է՝ հարդայած
գիրքս, էրած հացս, իմծ ջուրս, աշխատած փողս...

գ. Ած անցեալը՝ եթէ հոլովում է և նախա-
դասութեան մէջ կատարում լրացնողի, ենթակայի
և պատկ. ցոյց տուող որոշողի պաշտօն, գոյական է:

ա. Գրածը ջնջուեցաւ — գրութիւնը (ենթակայի):

բ. Գրածի կէսն անգիր արեց — գրութեան (ո-
րոշող):

գ. Ուշք ու միտքը գրածին էր նուիրել — գրու-
թեանը (լրացնող):

դ. Գրածը չհաւանեց վարժապետը — գրու-
թիւնը (լրացնող):

ե. Գրածից արտադրեցի մի երես գրութիւնից
(լրացնող):

զ. Գրածով հաստատեց իր ասածը — գրութիւ-
նով (լրացնող):

է. Գրածում մի ջնջուած տառ չկար — գրու-
թիւնում (լրացնող):

§ 215. Ապառնի գերբալը (լու) անորոշ գեր-
բալի սեռականն է և միշտ ածական որոշողի պաշ-
տօն է կատարում՝ ուղելու հաց, իմշու ջուր, հարդայա-
ծ գիրք...

Երբեմն լու ապառնու տեղ գործ է ածվում չի
վերջաւորութեամբ ապառնի, առաւելապէս կոչական
բառերում՝ սիրելք՝ եղբալը, պատուելք՝ բարեկամ...

լ. Երբեմն գործ է ածվում, երբ գոյականը զօ-

ըութեամբ է դրուած. այդ ժամանակ նա յօդ է առնում և լոգնակի թուով է վարվում՝ ասելի՞՛ առաջ (ասելու բաներդ): Դուք քո անելի՞ն արա՞:

§ 216. Ապառնի գերբալը դիմաւոր բայի տեղ դրուած պիտի համարուի, եթէ նպատակ ցոյց տուող պարագայականի պաշտօն լինի կատարած՝ ես գնում եմ իսրաւու (որ կարդամ): Զկնորսը գնաց ձուկը ռուսը (որ ձուկը որսայ):

§ 217. Բոլոր գերբայերը՝ բացի անորոշից, էական բայերի օգնութեամբ խոնարհվում են բոլոր ժամանակներով և գործ են ածվում դիմաւոր բայերի տեղ:

Դերբայերի պէս՝ էական բայերի օգնութեամբ, կարող են խոնարհուիլ և ածական ու գոյական անունները. գերբայերը նորանով են տարբերվում միայն, որ առանց էական բայերի էլ իրանք գործողութիւն ունին իրանց մէջ: Ահաւասիկ մի ընդհանուր օրինակ.

Սահմանական է շահագույն՝

Ներկայ՝ մարդ եմ, ծովլ եմ, գրած եմ *), գրող եմ, գրելու եմ:

*) Ի հարկէ սա՝ որպէս անցած գործողութիւն, միայն ձեռք ներկայ է, իսկ գաղափարով կը մնայ անցեալ և գործ կ'ածուի յարակատարի և գերակատարի մոքով, ինչպէս ու գրող է պարզ ներկայ է, իսկ գրելու է պարզ ապառնի բայց և այնպարզ ներկայ է, իսկ գրելու է պարզ ապառնի բայց և այնպարզ աշակերտների դիմութեան համար ամենայարմարն է այս ձեռ-

Անշատար՝ մարդ էի, ծովլ էի, գրած էի, գրող էի, գրելու էի:

Կապարեալ՝ մարդ եղալ, ծովլ եղալ, գրած եղալ, գրող եղալ, գրելու եղալ:

Վաղահառ. մարդ եմ եղել, ծովլ եմ եղել, գրած եմ եղել, գրող եղել, գրելու եղել:

Գեղահառ. մարդ էի եղել, ծովլ էի եղել, գրած էի եղել, գրող էի եղել, գրելու էի եղել:

Ապառնի՝ մարդ կը լինիմ, ծովլ կը լինիմ, գրած կը լինիմ, գրող կը լինիմ, գրելու կը լինիմ:

Պայմ. մարդ կը լինէի, ծովլ կը լինէի, գրած կը լինէի, գրող կը լինէի, գրելու կը լինէի:

Հրայրային՝ մարդ եղիքը, ծովլ եղիքը, գրած եղիքը, գրող եղիքը, գրելու եղիքը:

Սպարուտաստին՝ թէ, եթէ, որ՝

Ապառնի՝ մարդ լինիմ, ծովլ լինիմ, գրած լինիմ, գրող լինիմ, գրելու լինիմ:

Անշատար՝ մարդ լինէի, ծովլ լինէի, գրած լինէի, գրող լինէի, գրելու լինէի:

Դերբոյ՝ մարդ լինիլ, ծովլ լինիլ, գրած լինիլ, գրող լինիլ, գրելու լինիլ:

Ապառնել, ապա թէ ոչ՝ ժամանեակների այնպիսի խոսնաշխաթութիւնների կ'ստանանք, որից մանաւկներին հանել անհարթն կը լինի: Մեր առաջարկած ձեռով՝ բաւական է աշակերտներին բացատրել օրինակ՝ որ անցեալ գերբայիներկան ու անկատարը գիմաւոր բայի վարակատարի և գերակատարի ոյժ ունին, իսկ ապառնէ գերբայի վարակատարի և անկատարը գիմաւոր բայի ապառնի և պայմանականերկան և անկատարը գիմաւոր բայի ապառնի և պայմանականի մոքով են բանում: Գերբուծել պէտք է՝ գրոծ է անցեալ նի մոքով և բանում: Գերբուծել պէտք է՝ գրոծ է անցեալ գերբայի է էական բայի յամանակով, գրելու է՝ անառնի գերբայի է էական բայի անկատար ժամանակով:

Մակրայ:

§ 218. Մակրայներն՝ իրանց կազմութեանը նայելով, երկու են՝ բուն մակրայներ և բանի միւս մասունքներից առնուած մակրայներ:

Բուն մակրայները կամ պարզ բառեր են՝ «ո՞չ», «ամառ», «ո՞ր», «ո՞վ»... կամ առանձին մակրայակերտ մասնիկներով շինուած ածանցական բառեր՝ մեծապէս, քաջալուս, առատշն, սրտանց, սաստի՛, բնաւ, կամոյ, ակամայ...

263. Հետևեալ օրինակների մէջ գտնէք բուն մակրայները և իրանց նշանակութեան համեմատ առանձին կարգերի բաժանեցէք, համաձայն § 109-ի:

Ի՞նչո՞ւ գեղեցիկ էր երգում սոխակը: Հոռիւ մըթնել էր և ակա՞ մէկ սոսով: տաճջում է ցուրտն ու անձքել: Կալանաւորներին բանի բանտը տարան: Հայ նախարարներին բանբան գերի վարեցին: Կարակը շուռ հանգաւ և հրչէները յեր գնացին: Ես գիտեմ հայերն, առուերն և վրայեւ կարդաւ և գըել: Մէտէ կանգնեցէք, պաշտպանուեցէք աշխատ և անձնաւ անձնատուր մը լինիք: Յաղթուելուց յետոյ հայոց ամառայ սուլինք մեր գէնքերը: Կամոյ գնացէք, մէնք էլ շուրու կը գանք: Ա. Տէնին չնկատեցի, թէ դու հետո էիր: Նա բարբարէն չէր պատրաստել դասերը: Բնուցէն կարծում, թէ դու իսուած կը մոռանաս անելիքդ: Եւ առեւ շոր պէտք է աշխատէք: Եւ չէր սփոփում ինձ բնութեան գեղեցկութիւնը: Մէսյա: կանգնած էր նա սարի վերայ:

264. Այսուժ միայն գիտեմ, որ չը առածը չը պէտք է տանք: Յամաք մարդս այնպիսի բաներ է լսում, որ սպառէ դժուարանում է հաւատալ: Մայրն առէլ թուզը էր

գրում իւր որդուն, որն անկառաբար դրէլէ մոռացել էր երան: Յանկառանէն, այն նեղութիւններ յետոյ, ապեգակը կը խաւարի: Թշնամիքը յանութն ներս թափուեցան և նորան սպանեցին: Մէծապէս գգուշացէք ուրիշին դատելիս: Աստուած յայտնապէս խօսեցաւ Մոլսէսի հետ: Մոլսէսը ուժին զարկեց և ապառաժից անձնապէս աւատ ջուր բղանց: Վէրջապէս Խօրայէլացիք հասան քանանացոց երկիրը: Հայը և որդի ընդունելով խօսում էին: Հայըը Տէղօքն խըրատում էր որդուն: Բամբասանքը շրաբն խոցոսում է մարդուս սիրտը: Անշառ կը հասկանանք, եթէ Տէղն անգամ հարեւանցի պատո՞էք ձեր մտագրութիւնը: Ես որդուց ցանկանում էի ձեզ տեսնել: Ուշտիւ մանուկը առեւէ պիտի լսի և առաջ խօսի: Ուր ես գնում: Ուստի կը գաս, զարեր բլրուց: Ուր պիտի գնենք մեր յոգնած գլուխը: Արդարաւոր զարդարած էր, բայց անքառայ լիքն էր ապահութեամբ:

265. Ե՞ր էք տեսել, որ այրին ոտից գլուխ պճնուի իւր զարդերով թանկագին: Աշխատող մարդը Տէղ հաց կունենայ, երբէս չե սովութ: Երբէս էլ լոյս, իսկ այժմ եմ խաւար: Մէրը որոսում ես, Տէրը ամպում ես: Մէրը հարաւային հողմի նման հնչում ես ինս սոսու, ես ըլնում եմ շուրու: Լաւ է երբէս, քան սոսու: Լաւ է սոս, քան երբէս: Բժիշկը բէս չհասած չիւանդն արդէն մեւած էր: Դուռ իսուած գնացէք: Յամաքանց գիտէի: Աս այժմ կարիք չունիմ: Ասուց մենք կը կարգանք, յերս դուք: Նախ մտածիր և սոս խօսիր: Նախ և սոսը նիւթը պատրաստիր և ապագրիր: Աստուծու նախախնամութիւնը յաւիտեան պիտի թագաւորէ: Յերբոյ զզաւց Յուզան և տարաւ արծաթը քահանակապետին:

§ 219. Բացի բուն մակրայներից, կան շատ անուններ և գերանուններ, որոնք դրվում են բայի

Համար և մակբալ են համարվում: Դոյականից առնուած մակբայները կարող են հրլովուիլ ևս. միայն հոլովուած գոյական մակբայները լոգնակի թւում հասարակ գոյական անուն պիտի համարուին (բացի նորէրում, հօդէրքու, անցէաշէրը, որոնք ժամանակական մակբայ են). օրինակ՝

Վէրև գնաց—ուր գնաց՝ հայցական հոլով է:

Վէրևից ընկաւ—բացառական է:

Վէրեւալ անցաւ—գործիական է:

Վէրեւան կանգնած էր—ներգոյական է:

Վէրեւալը բռնուած են—ինչերը՝ հասարակ գոյական անուն է:

266. Հետեւեալ մակբայներով նախադասութիւններ կազմեցէք:

Ներս, ներսը, ներսից, ներսում, վար, վարը, վեր, վերը, *) գուրս, գուրսը, գրսից, գրսով գրսում. առաջ առաջը, առջելը, առաջնից, առջելից, յետել, յետելը, յետելից, յետելով, յետելում. գէմը, գիմացը, գիմացից:

267. Գոյականը գերանուան հետ: —Այսուեղ, այդ տեղ, այնտեղ, այնտեղից, այնտեղով, այնտեղում. հրաեղ, հրտեղ, հրտեղից, ամէն տեղ, ամէնայն տեղ, միքանի

*) Մեզանում վար և վեր մակբայերը միշտ շփոթում են միմանց հետ. մենք ասում ենք, օրինակ, վէր էտու և վէր էլու. մակբանակ վար էտու և վէր էլու ասելու: Խթէ շատ դժուար է վար մակբայը զործ ածել, ապա, կաթում ենք, վար բառի տեղ վէր զրելիս, պէտք է և տառով գոնէ զրենք (վէր), ուրիշներ սա ոյ երկարաւուի կընառումն է, բնչուի՝ հայր—հեր, մայր—մէր, փայտ—փէտ, ուրեմն և վայր—վէր:

տեղ, ոչ մի տեղ, ամէն տեղից, այստեղանց, մէջ տեղը, մէջ տեղից:

268. Դոյականը մենակ կամ ուրեց բառի հետ: —Այսօր, վաղը, երէկ, հիմակ, առաւուր, երեկոյին, հերու, անցեալ տարի, առաջ, առաջուց, մի օր, մի ժամանակ, օրով—ցերեկով, օրը կէսօրին, գիշերը, ցերեկը, կէս գիշերին, առաւուանց, գիշերհանայ, շատուց, շատոնց, հնուց, վաղուց, հիմակուց, իսկզբանէ, իյաւտենից, յաւտեան:

Խստիւ, սիրով, փութով, շուտով, դիւրաւ, գժուարաւ, բարով, բարեաւ, շտապով, շտապաւ, աւելորդով, մէկանց, մէկէն տուեց սպանեց, սրտանց, երեսանց, ծախու առնել, ինչ կուրին բժշկեց. ինչ անսպատան էր: —Անգամ, միանգամ, միանգամից, միանգամով, միանգամացն, երկու անգամ, երկից, երեց, շորեցս . . .

§ 220. Ածական անունների մեծագոյն մասը, եթէ բայի համար են, մակբայի պաշտօն են կատարում մենակ կամ մի մասնիկի հետ: —Բայց մարդը բայց էր խօսում: Փռքին մանուկը մի փռք ուշացաւ:

269. Զուգընթացաբար գրեցէք միքանի նախադասութիւններ, ուր ծիւնոյն ածական անունը ե՛ ածական լինի, ե՛ մակբայ:

§ 221. Դերանունը զանազան մասնիկների օգնութեամբ մակբայի պաշտօն է կատարում: —Այս պէս, այդպէս, այնպէս, սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս. այսքան, այդքան, այնքան, սոյնքան, դոյնքան, նոյնքան. ալսպիսով, այդպիսով, այնպիսով.

այսուհետեւ, այնուհետեւ. սապէս, դապէս...

§ 222. Դոյական անուններից շատերը եթէ

կրկնութեամբ են գործ ածուած, կամ եթէ մի և
նոյն գոլականը իւր մի հոլովի հետ է, կարող է
մակըալ լինիլ:

270. կաթել — կաթել կաթել.

Ոլոռն — ոլոռն ոլոռն.

Ստէպ — ստէպ ստէպ.

Խումբ — խումբ խումբ.

Դաս — դաս դաս.

Ցեց — ցեց ցեց.

Ոլոր — ոլոր ոլոր.

Կամաց — կամաց կամաց.

Ծուռ — ծուռ ծուռ.

Տեղ — տեղ տեղ.

Ժամանակ — ժամանակ ժամանակ.

Հատ — հատ հատ.

Թել — թել թել.

Կարգ — կարգ կարգ.

Ոտք — ոտք ոտք ցած իջնել.

271. Օր — օրէց օր.

Ժամ — ժամ առ ժամ.

Ժամ — ժամէ իժամ.

Մօտ — մօտէ մօտ, մօտ առ մօտ.

Երես — երեսէ երես, երես առ երես.

Ձեռք — ձեռքէ ձեռք.

Դուռն — դոնէ դուռն.

Երկիր — երկիրէ երկիր.

Աշխարհ. — աշխարհէ աշխարհ.

Ծայր — ծայրէ ի ծայր.

Գլուխ — գլուխէ ի գլուխ.

Դէմք — դէմացէ դէմաց.

Վար — դարէց դար.

Կէս — կիսով չափ.

Հոգի — հոգով չափ.

Տեղ — տեղն ի տեղն.

Փոխ — փոխ առ փոխ, փոխէ փոխ.

Վազ — վազէ վազ.

Ձեռք — ձեռք ձեռք.

Կուռք — կոնաբռնուկ.

Օք — օք աւուր.

Յետե — յետեէ յետե.

Հետ — հետ զհետէ.

Կոյք — կոյք զկոյքայն.

Վեր — վեր ի վերոյ, վայր ի վերոյ.

Մէջ — մէջ ընդ մէջ.

Դէմ — դէմ առ դէմ.

Երես — երես առ երես.

Քայլ — քայլ առ քայլ.

Տուն — տունն տուն, տունէ տուն.

Դաս — դաս առ դաս.

Բառ — բառ առ բառ.

Խիստ — խիստ առ խիստ.

Հազիւ — հազիւ հազ.

272. Մէկ էլ տեսնես, օր օրի վերայ. գիշեր ցերեկ. ըստ ամենայնի, ըստ պատշաճի, ըստ օրինի, ըստ պատահման, ըստ դպրուածին. առ առաւելն, առ հարկի. իւլիս խօսեցաւ. չուղէլով լանձն առաւ. զուր տեղը, պարապ տեղը զանք կ'անես, անիրաւ տեղը դատուեցաւ. գուցէ թէ, կարծես թէ, իցէ թէ, այն միջոցին, այն ժամին թողին գնացին. — Քանի որ, երբոր, մինչեւ որ...

Նախադրութիւն:

§ 223. Նախադրութիւնները, իրանց կազմութեանը նայելով, երկու են՝

ա. Բառ՝ նախադրութիւններ՝ համար, հետ, դէմ, չափ, պէս, առանց, մինչև, դէպ, իբր, իբրև, բացի, զատ, իզատ, իվեր, իվալը, առ, հայտառէ, համեմատ, հօռ (վերջին երեքը ածականից):

բ. Գոյսկանից առանձան՝ նախադրութիւններ, որոնք բոլորը, առանց բացառութեան, մակըալի պաշտօն ևս կատարում են. դրան առաջը, պարսպի յետել, վերեր, ներքեր, վրայ, տակը, մէջ, քով, դէմ:

§ 224. ա. բուն նախադրութիւններից՝ համար, հէտ, չափ, պէս, դէմ, առանց, հակառակ, համեմատ, հօռ առնում են տրական և սեռական հոլով՝ ինձ համար, վարժապետի համար, քեզ չափ, քո չափ, աշակերտի չափ, նորա դէմ, թշնամու դէմ, ում հակառակ, իմ հակառակ, ինձ հակառակ, հօրը հակառակ. ինձ մօտ, իմ մօտ, առանց ինձ:

բ. Փոխանակ առնում է սեռական հոլով:
— Տնուր իմ և քո փոխանակ:

գ. Մինչև, դէպի առնում են հայցական հոլով՝ մինչև ինձ, դէպի քեզ. մինչև սարը, մինչև քաղաքը, դէպի գիւղը, դէպի գիւղը:

դ. Ի՞ր, ի՞րեւ գործ է ածվում ամեն հոլովներով՝ իբրև մարդ, իբրև մարդու, իբրև մարդուց, իբրև մարդով, իբրև մարդում:

Ե. Զար, բայց, իվշ, իվշար, վար, իբուն, իգլունի, առնախդիրները առնում են բացառական և հայցական հոլովներ՝ քեզնից զատ. բացի վնասից, բացի շահից. մանկութիւնից ի վեր, սարն իվեր, ծառն իվեր, ականջս իվեր, գետն ի վայր նաւեցին, գետից վայր նաւեցին, ծառից վայր իշան: Օրն ի բուն, գիշերն ի բուն. ձմեռն ի գլուխ անդադար աշխատում է: Դիմել առ Աստուած . . .

Գոյականից առնուած նախադրութիւնները սեռական հոլով են առնում և նորա հետ էլ հոլովկում են՝ ծառի տակը, կտրի վերալ, իմ առաջը, իմ առաջի, իմ առաջից, իմ առաջով, իմ առաջում:

273. Գրեցէք հետևեալ նախադրութիւններով օրենակներ՝ առաջը, առաջեր, ետևը, յետևը, վերեր, ներքեր, վրայ, վերայ, վրայով, տակ, մէջ, մօտ, դէմ, դեմացը, տեղը, գուտանէ, յետանէ, միջոցն, անդամնէն (վերջին երեքը հոլոված գոլական են, որ երեմն միան նախադրութեան տեղ են գործ ածվում):

I Բովանդակութիւն: — ՆԱԽՍԳԱՍՈՒԹԵՍՈՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ:
Համառօտ և ընդարձակ նախագասութիւններ: Պարզաբանող բառերի տեսակները՝ որոշող, բացայացնելու, լրացնող և պարագայական բառեր. կոչական բառեր: Միաւորեալ և պարզ նախադասութիւններ. բաղադրեալ նախադասութիւն, գլխաւոր և երկորդական նախադասութիւններ. յաւելեալ, միջանկեալ և համազօր նախադասութիւններ (երես 1—20):

II ՄԱՍՈՒՆՅԻՑ ԲԱՆԻ: — Գոյական անուն, գոյական անուան սեւը, յատուկ և հասարակ գոյականներ, գոյական անուանի թիւը. հաւաքական գոյական անուն: Ածական անուն, որակական և յարաբերական ածականներ: Թուական անուն. բացարձակ, դասաւորական, բաշխական, մասնական թուականներ: Դերանուն, գերանուանների անուակները՝ էական, ցուցական, սուացական, հարցական, յարաբերական և անորոշ: Բայց բայերի սեւը, եղանակը, ժամանակը, թիւը և գէմքը: Դերբայց, գերբայի անուակները: Մակբայց և նորա անուակները: նախադրութիւն: Շաղկապ: Զայնարկութիւն (երես 20—48):

III ԲԱՌԱԿԱՋՄՈՒԹԻՒՆ: Բառերի արմատը և վերջաւորութիւնը, նախայար և վերջայար մասնիկներ, նախատիպ և ածանցական բառեր, պարզ և բարդ, բառեր, կարուաման և փափուման կանոնները (երես 48—61):

IV ՄԱՍՈՒՆՅԻՑ — Բ ՆԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ: Գոյական անունների փոփոխութիւնները. ուղղական և հայցական, սեռական և տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովեր. կանոնաւոր հոլովմանց պատկերը, անկանոն հոլովմունք. անուան յօդը, անունների հոլովումը օրոշեալ յօդով: Ածական անուան հոլովումը: Թուական անունների հոլովումը: Դերանունների փոփոխութիւնը՝ անձնական գերանուանների հոլովումը, ցուցական և ստացական գերանուաններ, գերանուանական յօդ, անորոշ գերանուան հոլովումը: Բայց փոփոխութիւնը, խոնարհումն և լընորդութիւն, էական բայերի խոնարհումը, առաջն լծորդութիւն, երկորդ լծորդութիւն, երրորդ լծորդութիւն, չորրորդ լծորդութիւն, կրաւորական բայերի խոնարհումը, անկանոն խոնարհումնք, պակասաւոր բայեր, միաբեմ բայեր, բացասական բայեր, անցողական բայեր: Դերբայց փոփոխութիւնը: նախադրութիւն: Շաղկապ: Զայնարկութիւն (երես 61—123):



